Azg
Azg armenian daily

12 ԱՊՐԻԼ 2003 ՇԱԲԱԹ 70 (2755)

Եռակողմ գագաթաժողովը սկսվեց Սանկտ Պետերբուրգում

երեկ Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում սկսվեց Ռուսաստան-Ֆրանսիա-Գերմանիա գագաթաժողովը՝ օրակարգում ունենալով հետսադդամյան Իրաքի կացության քննությունը եւ իրենց դիրքորոշումը: Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակից առաջ Սանկտ Պետերբուրգ ժամանեց Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերը, որ առանձին հանդիպում ունեցավ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Հանդիպումից հետո Ռուսաստանի նախագահն ասաց. «Իրաքյան պատերազմից առաջ պահանջում էինք հարցի խաղաղական լուծում: Այժմ, երբ գիտենք պատերազմի արդյունքները, շարունակում ենք հարցի խաղաղական լուծմանը հետամուտ լինել բացառապես ՄԱԿ-ի շրջանակներում»: Սա նշանակում է, որ երեք երկրների դիրքորոշումը փոփոխություն չի կրել եւ այսօր, երբ գագաթաժողովից հետո երեք երկրների ղեկավարները մամլո համատեղ ասուլիս կտան, հավանաբար այդ դիրքորոշումը մեկ անգամ եւս կրկնվի:

Հիշեցնենք, որ թե՛ Ռուսաստանը եւ թե՛ Ֆրանսիան ու Գերմանիան Իրաքից միլիարդավոր դոլարների հասնող պարտքեր ունեն գանձելիք եւ պայմանագրեր, որոնք անկատար են մնացել: Այժմ վտանգված է այդ բոլորը: (Այս մասին ավելի մանրամասն՝ էջ 5):

ԱՍՈՒԼԻՍ

«Մենք խնդիր ենք դրել ձայների մեծ տոկոսով ընտրվել ԱԺ-ում»

ՀՌԱԿ-ը սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր է դնում սեղանին

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ

Երեկ ՀՌԱԿ-ը լրագրողներին ներկայացրեց Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման իր ծրագիրը: Երկրի տնտեսական առաջընթացի ռազմավար-ազատական սկզբունքներն ու հիմնադրույթներն ամփոփող ծրագիրը կազմվել է մասնագետների՝ ինչպես ռազմավար, այնպես էլ ոչ կուսակցական ընդգրկուն խմբի աշխատանքի արդյունքում: Աշխատանքային խմբի ղեկավար, ՀՌԱԿ Հանրապետական վարչության անդամ, փոխատենապետ Մեխակ Գեւորգյանը նշեց, թե չնայած շատ չարչրկված կարող է հնչել, բայց իրենց ծրագրի անկյունաքարը քաղաքացու բարեկեցությունն է:

«Մենք այդ խնդրին նայում ենք մեր կուսակցության գաղափարախոսության տեսանկյունից եւ դրան հասնելու երկու պայման ենք նշում՝ քաղաքացու իրավունքների պաշտպանության համար մեխանիզմների ստեղծում եւ բոլորի համար գործելու հավասար դաշտի ապահովում»:

Լրագրողների հարցին ի պատասխան, թե ներդրումային նախագծեր կա՞ն ծրագրում, Մ. Գեւորգյանը եւս մեկ անգամ պարզաբանեց, որ ներկայացվածը զուտ մոտեցումներն է սահմանում, բայց, անշուշտ, կարելի է խոսել ներդրումների մասին եւս:

ՀՌԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը կուսակցության ջանքերով իրականացվելիք կոնկրետ ծրագրի մեկ օրինակ բերեց: Ռուսաստանի հայերի միության համագործակցությամբ նախատեսվում է հայաստանյան պրոթեզներ արտադրող գործարանների վերագործարկում:

Տես և էջ 2

ՊԱՏԵՐԱԶՄ

Մոսուլն էլ ընկավ

Քաոսը սիրազնանում է

Երեկ առավոտյան ամերիկյան ուժերից թնդանոթահրթիռային հարվածներ ստանալուց հետո Իրաքի հյուսիսային մյուս քաղաքը՝ Մոսուլը, առանց դիմադրության հանձնվեց ամերիկա-բրիտանական ուժերին: Իրաքյան 5-րդ բանակի հրամանատարությունը պարզապես ստորագրեց անձնատվության փաստաթուղթը, իսկ զինվորները տեղում թողնելով իրենց համազգեստը, զենքը եւ ռազմամթերքը, լքեցին դիրքերը եւ հեծիծն հայլեցին դեպի հարավ, դեպի իրենց բնակավայրերը:

Մոսուլի անկումից անմիջապես հետո սկսվեց արդեն գրավված քաղաքների համար սովորական դարձած կողոպուտը: Առաջինը կողոպտվեց ու ավերվեց քաղաքի բանկը, այնուհետեւ կառավարական ու ոչ կառավարական նիստ թալանվեցին սրտի վիրահատության սարքավորումներն ու նորածինների ինկուբատորները: Քաղաքում կառավարական հիմնարկներից հետո սկսվեց նաեւ մասնավոր խանութների, գործատեղիների, հյուրանոցների թալանը: Ինչ որ այլեւս հնարավոր չէր թալանել, վանդալների վերածված ամբոխը հրդեհում էր:

Եվ այս ամբողջը կատարվում է ամերիկացի զինվորների աչքի առաջ, նրանց եթե ոչ քաջալերող, ապա անտարբեր հայացքի ներքո: Այս փաստը ենթադրել է տալիս ոմանց, որ ամերիկյան կողմի նպատակն է ամբողջովին ոչնչացնել երկրի ինքնակառավարման մարմիններն ու ենթակառուցվածքները եւ սփոփել Իրաքի քաղաքացիներին, որ

հիմնարկները: Անչափահասների ձեռքին հայտնվեց հրացան եւ նույնիսկ ձեռնառումբ:

Նախորդ օրը գրավված Քիրքուք քաղաքում, հենց որ հայտնի դարձավ քուրդ զինյալների հեռանալու մասին տեղեկությունը, վերջիններս նոր թափով վերսկսեցին կողոպուտը: Երեկ նույնը շարունակվեց Բասրայում եւ մանավանդ Բաղդադում: Այստեղ կողոպուտից զերծ չմնացին անգամ հիվանդանոցները: Նույն իրենք խնդրեն ամերիկացիներին կառավարելու իրենց...

Մոսուլի անկումից հետո դեռեւս գրավված չեն նախագահ Սադդամ Հուսեյնի հայրենի քաղաքը՝ Տիկրիտն ու շրջակայքը: Իրաքյան բանակի եւ կիսազինվորական ուժերի մնացորդները, ըստ արեւմտյան աղբյուրների, իրենց վերջին ուժերը կենտրոնացրել են այդտեղ, որը, ինչպես ամերիկացիներն են խոստանում, նույնպես կընկնի առաջիկա օրերին:

Վոլֆովիցը սադրիչ հայտարարությամբ սպառնում է Սիրիային

Ինչպես տեղեկացնում է թուրքական «Ենի շաֆակ» թերթը, ապրիլի 10-ին ԱՄՆ Կոնգրեսում ելույթ է ունեցել պաշտպանության փոխնախարար Պոլ Վոլֆովիցը, որտեղ նա մասնավորապես ասել է. «Սիրիացիների դիրքորոշումն անտանելի է: Նրանց հիշեցնեմ, որ եթե դա այդպես շարունակվի, ապա մենք ստիպված կվերանայենք մեր քաղաքականությունն այն երկրների նկատմամբ, որոնք աղաստան են տալիս ահաբեկիչներին եւ պատերազմի հանցագործներին»:

Միաժամանակ Վոլֆովիցը որդեգրած դիրքորոշումը փոխելու առնչությամբ հորդորել է սիրիացիներին, ավելացնելով. «Ուշի-ուշով հետեւելու ենք նրանց քայլերին: Պենտագոնը Սիրիա զորք մտցնելու մտադրություն չունի: Նման որոշում կայացնում են ԱՄՆ նախագահը եւ Կոնգրեսը»:

Հիշեցնենք, որ նախորդ օրը Սիրիային ու Իրանին ուղղված նախազգուշացում էր հնչել Մ. Նահանգների պետքարտուղար Քոլին Փաուելի կողմից, ինչն անմիջական հակազդեցություն էր առաջացրել Եգիպտոսի արտգործնախարար Ամր Մուսայի մոտ: Վերջինս հիշեցրել էր Իսրայելի անպատժելիության փաստը եւ Մ. Նահանգների կրկնակի չափանիշների քաղաքականությունը:

Հ. Ղ.

ԱՄՆ-ը Թուրքիային հորդորում է բացել Հայաստանի հետ սահմանները

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 11 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ պետդեպարտամենտի հաշվետվությամբ կոչ է արվում Թուրքիային հանել Հայաստանի տնտեսական շրջափակումը: Նրանում ասված է, որ ԱՄՆ կառավարությունը հորդորում է Թուրքիայի կառավարությանը հնարավորության դեպքում բացել սահմանները Հայաստանի հետ:

Հարցը վերջին անգամ թուրք պաշտոնատար անձանց հետ քննարկվել է ապրիլի 2-ին Անկարայում՝ ԱՄՆ պետքարտուղարի այցի ժամանակ: Նշվել է, որ եթե բացվի հայ-թուրքական սահմանը, դրանից կնվազեն տրանսպորտային ծախսերը, կզարգանա Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ առեւտուրը, որը մեծապես կնպաստի Հայաստանի եւ Արեւելյան Թուրքիայի տնտեսության զարգացմանը: Դրա օգուտները կզգացվեն ամբողջ տարածաշրջանում, ասված է հաշվետվության մեջ:

Նաեւ ասված է, որ Հայաստանը կարող է ծառայել որպես Թուրքիայի եւ վերջինիս ամենամտերիմ բարեկամ Ադրբեջանի միջեւ տրանսպորտային ամենակարճ եւ ուղիղ միջանցք: Արդյունքում անխափան կգործեն Ստամբուլն ու Բաքուն իրար միացնող երկաթուղին, ինչպես նաեւ կապը Միջերկրական եւ Կասպից ծովերի միջեւ:

Հաշվետվության մեջ այլեւս ոչինչ ասված չէ Անկարայում Հայաստանին վերաբերող Փաուելի կողմից անցկացված բանակցությունների մանրամասնությունների մասին:

Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, ԱՄՆ պետդեպարտամենտը նաեւ դրական մեղմ խոսքեր է ասում Հայաստանի հասցեին «2002 թվականից Անկարայի հետ դիվանագիտական տարբեր մակարդակների հարաբերություններն ավելացնելու համար»:

Ծաղկազարդ

Ծաղկազարդը, որ այս տարի նշվում է ապրիլի 13-ին, Մեծ պահքի յոթերորդ կիրակին է, հիշատակը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի երուսաղեմ մուտքի, որին ժողովուրդն ընդունել է խանդավառությամբ, դիմավորել ձիթենու եւ արմավենու ճյուղերով, ինչպես նաեւ իրենց զգեստները փռելով ճանապարհի վրա եւ բացականչելով. «Օվսաննա Բարձրյալին, օրհնյալ լինի նա, ով գալիս է Տիրոջ անունով: Խաղաղություն երկնքում եւ փառք բարձունքներում» (Մարկ. 10.9-10): Համաձայն եկեղեցու հայրերի ուսուցումների, Հիսուսի առջեւ հանդերձները նետելը խորհրդանշել է մեղքերից ազատվելը: Ոստեր եւ ճյուղեր ընծայելը խորհրդանշել է առանձնակի պատիվներ եւ հանդիսավորություն: Հնում ձիթենին համարվել է իմաստության, խաղաղության, հաղթանակի եւ փառքի խորհրդանշան: Ձիթենու եւ արմավենու ճյուղերի ընծայումը Քրիստոսին խորհրդանշում էր մահվան հանդեպ հաղթանակը: Հայաստանում ձիթենու եւ արմավենու փոխարեն ուռենու ճյուղերն են օգտագործում:

Ծաղկազարդի նախօրեին, շաբաթ օրը կատարվում է Ծաղկազարդի նախատոնակը, բացվում է եկեղեցու խորանի վարագույրը, իսկ հաջորդ օրը ժամերգությունից հետո մատուցվում է Սրբ. պատարագ: Ծաղկազարդի առավոտյան եկեղեցին օրհնում է ձիթենու կամ ուռենու ոստերը եւ բաժանում ժողովրդին: Ոստերի փափկությունը խորհրդանշում է Քրիստոսին հետեւողների խոնարհությունը: Ուռենու ճյուղերը մեր ընծաներն են Տիրոջը: Օրհնված ոստերը Սրբ. պատարագից հետո տանում են հավատացյալներն իրենց տները եւ պատկի նման գործած ամրացնում երեւացող տեղում եւ պահվում է մինչեւ հաջորդ Ծաղկազարդ, որն էլ հաջողություն ու պտղաբերություն է պարգեւում այդ օջախին:



Ծաղկազարդը տոն է մանավանդ երեխաների համար: Քրիստոսը չէ՞ որ նրանց համար ասաց՝ թողեք, որ նրանք ինձ մոտենան, քանզի նրանցն է երկնի արքայությունը: Ծաղկազարդին երեխաներին տոնական զգեստներ հագցնելով տանում են եկեղեցի՝ Աստծու օրհնությունը ստանալու:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԱՐՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

«Մենք խնդիր ենք դրել ձայների մեծ տոկոսով ընտրվել ԱԺ-ում»

Սկիզբը էջ 1

«Այս պահին պրոթեզները մեր երկրում մի քանի անգամ ավելի թանկ են, քան, ասենք, Ռուսաստանում, քանի որ մենք ներկրում ենք Գերմանիայից, իսկ ռուսներն ունեն 300 մասնագիտացված ձեռնարկություն»: Պրն Միրզախանյանի հավաստմամբ, ակնկալվող արտադրության դեպքում Հայաստանը ոչ միայն ինքնուրույն կարահոլի իր այդ շուկայի կարիքները, այլեւ կկարողանա արտահանել այդ արտադրանքը, եւ, իհարկե, կստեղծվեն նոր աշխատատեղեր:

Գալով սպասվող խորհրդարանական ընտրություններին՝ «Օրանի» լրագրողին հետաքրքրում էր, թե «ստեղծված քաղաքական համակարգին ինչպե՞ս է վերաբերվում Ռամկավար Ազատական կուսակցությունը եւ ինչպե՞ս է պատրաստվում թափանցել Ազգային ժողով»:

Ուրբեն Միրզախանյանը նշեց, որ կուսակցության գնահատականները երկրի զարգացման վերաբերյալ, անշուշտ, միանշանակ չեն ու թեպետ Հայաստանն ընթանում է ժողովրդավարության ուղղությամբ, այդ ճանապարհին դեռ կան լուրջ արգելքներ: «Սեպտեմբեր, ցավոք, տարիներ առաջ խեղվել է ընտրության ինստիտուտը: ՀՈԱԿ-ն զգաց այդ խեղման հետեւանքները 1995 թ. դադարելով խորհրդարանական ուժ լինելուց»: Բայց 1999 թ.-ից, ըստ Ռ. Միրզախանյանի, արդեն որոշակի բարելավում է զգացվում: «Ինչ վերաբերում է թափանցելուն, չեմ բացառում, որ կլինեն ինչ-ինչ անհատներ, կազմակերպություններ, որոնք կփորձեն թափանցել: Մենք գնում ենք կոնկրետ ծրագրերով, կոնկրետ գործերով, հետեւաբար «թափանցելու» խնդիր չունենք»: ՀՈԱԿ ատենապետի հավաստմամբ, կուսակցությունը խնդիր է դրել ձայների մեծ տոկոսով ընտրվել ԱԺ-ում: «Ու կարծում եմ, բոլոր հիմքերն ունենք հպարտանալու մեր համամասնական ցուցակի բովանդակային մասով»:

Լրագրողներն այստեղ հերթական անգամ դիմեցին հանդիպմանը ներկա Գագիկ Աբրահամյանին, թե ինչո՞ւ է նա հայտնվել հենց ՀՈԱԿ ցուցակում: «Իսկ ուրիշ ի՞նչ կուսակցություն կնշեք: Ռամկավար-ազատական ծրագրերն, ազգային գործարարությունը համապատասխանում են իմ ընթռնումներին: Մենք գործարար ենք, եւ գործում ենք միջազգային շուկայում»:

Պրն Միրզախանյանը տեղեկացրեց լրագրողներին, որ մեծամասնական կարգով կուսակցությունը թեկնածուներ է առաջադրել մայրաքաղաքի եւ մարզերի տասներեք ընտրատարածքներում, տասը կուսակցական, երեքը ոչ:

Վերջապես, անդրադառնալով համահայկական կազմակերպության ստեղծման գործում ՀՈԱԿ-ի եւ Ռուսաստանի հայերի միության համագործակցությանը: «Նման կառույցի ստեղծումը համազգային ձեռնարկում է, եւ աշխատելու ենք: Եթե դառնանք խորհրդարանական ուժ, այդ ուղղությամբ գործելու հնարավորություններն էլ կմեծանան», ասաց Ռ. Միրզախանյանը:

«Ազգի» գլխավոր խմբագիր Հակոբ Ակեսիրյանը հիշեցրեց, որ սա նման կառույց ստեղծելու առաջին փորձը չէ: «Դեռեւս 1946-ին Նյու Յորքում ՌԱԿ-ի առանցքային մասնակցությամբ խորհրդաժողով գումարվեց եւ մշակվեց Խորհրդային Հայաստանին աջակցելու մի ողջ փաթեթ: Այդ ժամանակից ՌԱԿ-ը նման միջոցառումների փորձ ունի: Եվ մնացյալ բոլոր փորձերը, որոնց ՌԱԿ-ը եւ մյուս ավանդական կուսակցությունները չեն մասնակցել, ձախողվել են»:

Խորհրդարանը պատասխանատվությունը թողնում է հասարակությանը

Իսկ հանրաքվեի հարցականը խոստանում է մերժել մահապատիժը

երեկ ավարտվեց «հերթական» արտահերթ ԱԺ նստաշրջանը, որի օրակարգում 19 հարց էր ընդգրկվել: Այս նստաշրջանը կարեւորվում էր հատկապես երկու առումով: Նախ որովհետեւ քվեարկության պետք է դրվեր «Ազնվաբանային լրատվության մասին» բազմաշարյար օրինագիծը, եւ երկրորդ՝ վերջին քննարկման էր ներկայացվել քրեական նոր օրենսգրքի նախագիծն՝ ուժի մեջ մտնելու հավելյալ օրինագծի հետ:

Դատելով, սակայն, ընդհանուր տրամադրություններից, դրանք այդքան էլ հետաքրքրելի չթիսի լինեին, ինչը եւ ցույց տվեց վերջնական քվեարկությունը: Խնդիրն այն է, որ ներկայումս խորհրդարանին ներկայացված հիշատակված երկու օրինագծերի հետ կապված էլ լուրջ վերապահումներ կային: Առաջինի՝ «ԶԼ» օրինագծի կապակցությամբ դժգոհ էին լրագրողական լայն շրջանակները, երկրորդից՝ քրեական օրենսգրքի նախագծից բավարարված չէին եվրոպայի խորհրդի փորձագետները:

Եվ քանի որ նախընտրական տրամադրություններով պայմանավորված են ներկայումս պատգամավորները կատարում քվեարկությունները, արդա երկու օրինագծերի մերժման հանգամանքը նույնիսկ կարելի է բնական համարել: Հետաքրքրականը սակայն այն է, որ փաստորեն բացի խորհրդարանական մեծամասնության մի հատվածից (42 պատգամավոր), ողջ խորհրդարանը խուսափեց հստակ դիրքորոշում արտահայտել եւ չմասնակցեց քվեարկությանը: Բավական է միայն նշել, որ ընդամենը երկու դեմ արձանագրվեց, երեք ձեռնպահ: Նման իրավիճակն ուղղակիորեն հավաստեց այն մոտեցումը, թե վերընտրվել ցանկացող պատգամավորները հստակ դիրքորոշումից խուսափելով պարզապես չցանկացան փչացնել հարաբերությունները լրագրողների եւ լրատվամիջոցների հետ՝ հաշվի առնելով վերջիններիս բարձրացրած աղմուկը նախագծի կապակցությամբ:

Առանձնակի կարեւորություն էին ստանում նաեւ քրեական օրենսգիրքը եւ այն ուժի մեջ մտցնելու օրենքի նախագծերը: Դրանց քվեարկության արդյունքներով օրենսգրքի նախագիծը մերժվեց երրորդ ընթերցումից հետո, իսկ ահա գործարկելու նախագիծն ընդունվեց նաեւ երկրորդ ընթերցմամբ: Սակայն արդեն իսկ պարզ է, որ եթե, ասենք, վաղը կամ մյուս օրն այն ներկայացվի երրորդ ընթերցմամբ, ապա ընդունվելու համար անհրաժեշտ ձայներ չի կարող հավաքել, որովհետեւ նկատելի է պատգամավորների՝ ընդունելու պատասխանատվությունից խուսափելու կեցվածքը:

Դեռ հինգշաբթի օրը հերթական անգամ այս նախագիծը խորհրդարանին ներկայացնելիս կառավարության ներկայացուցիչ, ՀՀ ոստիկանապետի խորհրդական Միխայել Գրիգորյանը հավաստեց, թե գործադիրն իր մոտեցումները վիճահարույց մահապատժի հարցում չի փոխել, այսինքն՝ երեք դեպքերի հետ կապված պնդում է մահապատժի պահպանման անհրաժեշտությունը: Այդ դեպքերն են՝ մանկահասակ աղջկա բռնաբարությունը, տեռորիզմը եւ վերջապես առանձնապես ծանր հանգամանքներում կատարված սպանությունը: Պարզ է, որ հատկապես վերջինիս ենթատեքստում է նկատի առնվում հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը, որի հետ կապված քաղաքական ուժերի գերակշիռ մասը որեւէ այլընտրանք, քան մահապատիժը, չի ընդունում: Այս տրամաբանությամբ էլ ժամանակին խորհրդարանը խուսափեց վավերացնել «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների» պայմանագրի վեցերորդ արձանագրությունը, որով ԵԽ-ին անդամակցող ցանկացած երկիր պարտավորվում է քրեական օրենսգրքում ընդհանրապես բացառել մահապատիժը:

Միխայել Գրիգորյանը հայտարարեց, թե ԵԽ փորձագետներն ընդհանուր առմամբ դրական են գնահատում նոր օրինագիծը, սակայն գտնում են, որ հիշյալ բացառությունները մահապատժի վերացման հարցում եւս պետք է վերացվեն: Այսինքն՝ ԵԽ-ն եւս իր դիրքորոշումներից չի հրաժարվում: Այսօրվա դրությամբ ընդամենը երկու քաղաքական ուժեր՝ ՀՅԴ-ն եւ ԱԺՄ-ն են սկզբունքորեն կողմ ընդհանրապես մահապատժի վերացմանը: Նրանք գտնում են, որ եթե Հայաստանը որեւէ պարտավորություն է ստանում, ապա պետք է հետեւողական լինի իրագործելու, հակառակ պարագայում կարող է վտանգել իր հեղինակությունը միջազգային ասպարեզում:

Հարցի կապակցությամբ մասնագիտական ուրույն գնահատական ունի Միխայել Գրիգորյանը: Վերջինիս համոզմամբ, ճիշտ կլիներ, որ պատժի ծայրահեղ միջոցի խնդիրը լուծվեր սկզբունքորեն: Իսկ մյուս կողմից, ըստ Գրիգորյանի, երբեւէ չի եղել որեւէ հասարակություն, որտեղ մահապատժի կիրառումը ծառայի իր հիմնական նպատակին՝ տվյալ տեսակի հանցագործությունների կրճատմանը: Իսկ այդ դեպքում, քանի որ Հայաստանը որդեգրել է զարգացման ժողովրդավարության քաղաքակիրթ ճանապարհը, ուրեմն նպատակահարմար է բացառել մահապատիժը:

Հետաքրքրական է, որ հենց այս պահին էր կառավարությունը ներկայացրել նախագիծը: Երբ նախորդ անգամ հարցը քննարկվում էր, քաղաքական ուժերի միջեւ կարծես լուռ համաձայնություն կայացավ, որ վճռահաստելու պատասխանատվությունը պետք է թողնվի մյուս գումարման խորհրդարանին: Խնդիր էր դրվել այդ նպատակով մինչեւ լիազորությունների ավարտը հարց չքննարկել: Հիշեցնենք նաեւ, որ եվրախորհուրդը Հայաստանին ժամանակ էր տվել մինչեւ հունիս՝ հստակ, վերջնական մոտեցում արտահայտելու համար:

Այս տեսակետից իսկապես փրկություն կարող է լինել սահմանադրության փոփոխությունների նախագծի հանրաքվեն, որով փաստորեն արգելվում է մահապատիժը: Այս հարցի կապակցությամբ սահմանադրության նոր խմբագրումը միայն հետեւյալն է ամրագրում. «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք»: Այսինքն՝ մահապատիժն արգելվում է:

Փաստորեն երեկվա քվեարկությամբ քաղաքական ուժերն այդ հարցի վերջնական լուծումը թողնում են հասարակությանը: Եթե հանրաքվեով սահմանադրության նոր խմբագրումն ընդունվի, փաստորեն հաջորդ խորհրդարանը մեխանիկորեն կգրկվի քրեական օրենսգրքում որեւէ կարգավորում կատարելուց:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Արտերկրում կստեղծվեն հայկական առեւտրային պալատներ

ԵՐԵՎԱՆ, 11 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Զարգացման հայկական գործակալությունը մշակել է «Հայկական արտահանման պալատ» ծրագիրը, որի շրջանակներում արտերկրում կստեղծվեն հայկական առեւտրային պալատներ: Գործակալության գործադիր տնօրեն Վահագն Մովսիսյանի խոսքերով, Մոսկվայում արդեն բացվել է դրանցից մեկը, Կանադայում այն ստեղծման փուլում է, եւս երեք նմանատիպ հասատություններ նախատեսվում է բացել Եվրոպայում, Միջին Արեւելքում եւ ԱՄՆ-ում:

Արտահանման պալատների ստեղծման նպատակը հայ արտադրողին աջակցելն է, հայրենական ապրանքատեսակն աշխարհում ներկայացնելը եւ ապրանքաշրջանառությունն ակտիվացնելը:

Գործակալության խորհրդատու Պատրիկ Մյուրեյի կարծիքով, Հայաստանը փոքր երկիր է, եւ ձեռնարկատերերն արտադրությունը սկսելուն պես պետք է մտածեն նաեւ արտահանման մասին, թեեւ կան բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես՝ տրանսպորտային, արտարժույթի: Արտահանման հաջողությունը, նրա կարծիքով, կախված է տարբեր երկրներում գրասենյակների, ծյուղերի հիմնադրմամբ, ինչպես նաեւ հայրենական արտահանող կազմակերպության ստեղծմամբ: Պ.Մյուրեյը, որպես օրինակ բերելով Պեռնո Ռիկար ընկերությունը, նշեց, որ նման կազմակերպությունը բաջատեղյակ է շուկային եւ աջակցության կարիք չունի, բայց հայկական փոքր եւ միջին ձեռնարկությունները զգում են դրա անհրաժեշտությունը: Նա տեղեկացրեց, որ ԶՀԳ-ը հայկական արտահանման տուն հիմնելու բազմաթիվ առաջարկներ է ստացել Կանադայից, Եգիպտոսից, Լատվիայից, Արաբական Միացյալ Էմիրություններից, Ռուսաստանից: Արդեն ընթանում են բանակցություններ, թեեւ գործակալության բյուջեն սեղմ է եւ միաժամանակ փնտրվում են ֆինանսավորման աղբյուրներ: Խորհրդատուն նման ծրագրի իրականացման համար հեռանկարային համարեց ճգրիտ մեքենաշինության ոլորտը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քննությունը շարունակվում է

Իսկ դիմող կողմն ասուլիսում ելույթ է ունենում

Սահմանադրական դատարանի երեկվա նիստը շարունակվեց ԿԸՀ-ին ուղղված դիմող կողմի հարցերով: Կողմերը հարցուպատասխանի ձեւով դարձյալ անդրադարձան արդեն բազմիցս հնչեցված խնդիրներին՝ որոնք դեռեւս բավարարված չլինելով ոչ պատասխաններից, ոչ հարցերից: Աշոտ Սարգսյանը մի շարք հարցերով նախ պարզեց, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 2-րդ փուլի ժամանակ, համաձայն իր իսկ ներկայացրած փաստաթղթերի, տպագրվել է 2 մլն 419 հազար քվեաթերթիկ: Բայց ամփոփիչ արձանագրության մեջ նշվել է, որ բաժանվել է 2 մլն 423 հազար: Այն հարցին, թե որտեղից են հայտնվել 4000 ավելի քվեաթերթիկներ, ԿԸՀ փոխնախագահ Համլետ Աբրահամյանն ըստ էության պատասխան չտվեց: Հայտարարված ընդմիջումից հետո դատարանին ներկայացվեց տարօրինակ թվաբանություն, համաձայն որի քվեաթերթիկները բաժանելիս պարզվել է, որ դրանցից 15 հազարը տպագրական խոտան է: Եվ չգիտես ինչպես տպագրված քվեաթերթիկների հետ գումարում-հանումից հետո ավելացել է 4000:

Դիմող կողմն ավելորդ չհամարեց ՍԴ-ում եւս խոսել Ռոբերտ Քոչարյանի՝ նախագահի թեկնածու գրանցվելու հետ կապված հարցերի մասին: Շեշտադրվում էր այն հանգամանքը, թե Արցախի բնակչությունն ինչո՞ւ չէր ներառվել նախագահական ընտրությունների ժամանակ որպես ընտրող, երբ առանձին քաղաքացիներ իրավունք էր ստացել ընտրվելու:

ԿԸՀ ներկայացուցիչ Տիգրան Մուկուչյանին, դիմող կողմի հարցերից հետո, հարցեր տվեց նաեւ ՍԴ նախագահը: Դրանց ի պատասխան նշվեց, որ ԿԸՀ-ն քվեատուփեր լցնելու դեպքերի մասին ահազանգերից հետո ճշտումներ է կատարել, եւ հիմնականում դրանք հերքվել են:

Նիստն ավարտվեց, որից հետո դիմող կողմի ներկայացուցիչներն ասուլիս հրավիրեցին: Նախ խոսեցին արցախահայության՝ Հայաստանի ընտրություններին մասնակցել-չմասնակցելու հարցերից, ապա Աշոտ Սարգսյանն անդրադարձավ լրատվամիջոցների կողմից ՍԴ-ում գործի քննության լուսաբանմանը: Ըստ որի Սարգսյանի, ԶԼՍ-ները հիմնականում ագրեսիվ են տրամադրված: Ապա ըստ էության որոշ դրվագներ ներկայացնելով դիմող կողմի դատարանում ներկայացվելիք ելույթից, ասուլիս հրավիրողները խոսեցին ընտրությունների կեղծ լինելուց, 1700-ից ավելի էջ ունեցող 7-օրյա ժամկետում գործ կազմելու հետ կապված խնդիրներից: Խոսվեց նաեւ վստահված անձանց ձերբակալություններից, ԵԱՀԿ դիտորդական առաքելության եզրակացությունից՝ նշելով, որ բոլորն էլ Հայաստանում են ապրում, ոչ մեկն այս երկրի թշնամին չէ: Պարզապես իրենց նպատակն է դատարանի գնահատականին ներկայացնել ընտրակեղծիքների չափը:

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԿԵՍԻՐՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲՅԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Հարցազրույց

Ի՞նչ է անհատական ծածկագիրը (ԱԾ): Արդեն 2-3 տարի շրջանառվում է այս հասկացությունը, բայց բուն էությունը դեռեւս մատչելի չէ հասարակությանը: Հենց այդ նպատակով լրագրողներին ու նրանց միջոցով նաեւ լայն շրջանակներին իրազեկելու համար ՀՀ սոցաղ նախարարությունը մեծ հավաք էր հրավիրել: «Անհատական ծածկագրերի լայնորեն ներդնումը մեզանում գուցե թե շատ ժամանակ չխլի, քանի որ այլ երկրներում դրա մեխանիզմը, փորձը վաղուց մշակվել են, եւ մենք օգտվելու ենք դրանցից: Այս պահին կարեւորը հասարակության միտքն ու լսողությունը բացելն է», հավաքի սկզբում ընդգծեց ՀՀ սոցաղ նախարար Ռազմիկ Մարտիրոսյանը:

Ինչո՞ւ է անհրաժեշտ ԱԾ-ն: Ասենք, մարդն ուզում է թոշակի անցնել, նա պետք է համապատասխան ծառայությանը ներկայացնի իր ԱԾ-ն: Ծածկագրի սկզբնական ինֆորմացիան կտեղափոխվի կենսաթոշակային տվյալների համակարգ, իսկ հետո այստեղ կմուտքագրվեն թոշակ ստանալու հետ կապված մյուս տվյալները՝ աշխատանքային ստաժ, աշխատանքային գրքույկ, աշխատաղայման եւ այլն: Այլ ոլորտներում նույնպես մշակվում են համապատասխան տեղեկություններ: ԱԾ-ն քաղաքացիներին վերաբերող տարբեր կառույցների միջեւ հարցումների փոխանակությունների հնարավորություն է ընձեռում: Այսինքն՝ մարդը կազատվի տարբեր կառույցներից զանազան տեղեկանքներ ստանալուց: Ասենք, մարդ ուզում է հանրակրթարան ընդունվել, նա պետք է համապատասխան ծառայությանը ներկայացնի իր ԱԾ-ն: Ծածկագրի սկզբնական ինֆորմացիան կտեղափոխվի կենսաթոշակային տվյալների համակարգ, իսկ հետո այստեղ կմուտքագրվեն թոշակ ստանալու հետ կապված մյուս տվյալները՝ աշխատանքային ստաժ, աշխատանքային գրքույկ, աշխատաղայման եւ այլն: Այլ ոլորտներում նույնպես մշակվում են համապատասխան տեղեկություններ: ԱԾ-ն քաղաքացիներին վերաբերող տարբեր փոխանակությունների հնարավորություն է ընձեռում: Այսինքն՝ մարդը կազատվի տարբեր կառույցներից զանազան տեղեկանքներ ստանալուց: Ասենք, մարդ ուզում է թոշակի անցնել, նա պետք է համապատասխան ծառայությանը ներկայացնի իր ԱԾ-ն: Ծածկագրի սկզբնական ինֆորմացիան կտեղափոխվի կենսաթոշակային տվյալների համակարգ, իսկ հետո այստեղ կմուտքագրվեն թոշակ ստանալու հետ կապված մյուս տվյալները՝ աշխատանքային ստաժ, աշխատանքային գրքույկ, աշխատաղայման եւ այլն: Այլ ոլորտներում նույնպես մշակվում են համապատասխան տեղեկություններ: ԱԾ-ն քաղաքացիներին վերաբերող տարբեր փոխանակությունների հնարավորություն է ընձեռում: Այսինքն՝ մարդը կազատվի տարբեր կառույցներից զանազան տեղեկանքներ

Հասարակության թվայնացումը թափ է առնում

Անհատական ծածկագրերի համակարգի ներդրման համար առաջին անգամ ՀՀ պետբյուջեից 98 մլն դրամ է առանձնացվել

«Անհատական ծածկագիրը նշանակում է տեղեկատվության միասնականություն, նշանակում է բարեփոխում ողջ սոցիալական համակարգում: ԱՄՆ կառավարությունը շատ է կարեւորում այս խնդրի իրագործումը նաեւ Հայաստանում եւ տեխնիկական վերազինումներ իրականացնելու նպատակով տրամադրել է 3 մլն դոլար», սա էլ Հայաստանում սոցիալական բարեփոխումների ծրագրի ղեկավար Ռոջեր Վոհնի խոսքն էր: Համակարգի շահագործման համար առաջին անգամ նաեւ ՀՀ պետբյուջեն 98 մլն դրամ է հատկացրել: ԱԾ համակարգ մտնելու պարտադրանք արտաքուստ չկա. բայց եթե քաղաքացին ուզում է պետությունից որեւէ աջակցություն, ասենք, նպաստ ստանալ, կամա թե ակամա, պետք է ընդունի այն:

Փորձնական ծրագրով արդեն իսկ 25 հազար քաղաքացիներ ԱԾ-եր ունեն: Եվս 150 հազարի հայտ նույնպես կա:

ԱԾ-ի բազան ձեւավորվելու է սահմանափակ ինֆորմացիայի հիման վրա՝ անուն, ազգանուն, ծննդյան թիվ, սեռ, անձնագրային համարներ, այսինքն՝ անձի մասին տեղեկություններն անձնագրերում ավելի շատ են (հասցե, վիզաների թույլտվություն եւ այլն), քան կլինեն ԱԾ-երում: Թվային 10 նիշով ամրագրված այս տվյալներից բացի, ծածկագիրը պարունակում է նաեւ օժանդակ համար եւ հսկիչ նիշ, որոնց շնորհիվ երբեւէ չեն ստիպվի անվանակիցների անհատական տվյալները: Տարբեր կառույցներում անհատի վերաբերյալ տվյալները մշակվում են միայն նրա համաձայնությամբ:

Ի՞նչպես է անհրաժեշտ ԱԾ-ն: Ասենք, մարդն ուզում է թոշակի անցնել, նա պետք է համապատասխան ծառայությանը ներկայացնի իր ԱԾ-ն: Ծածկագրի սկզբնական ինֆորմացիան կտեղափոխվի կենսաթոշակային տվյալների համակարգ, իսկ հետո այստեղ կմուտքագրվեն թոշակ ստանալու հետ կապված մյուս տվյալները՝ աշխատանքային ստաժ, աշխատանքային գրքույկ, աշխատաղայման եւ այլն: Այլ ոլորտներում նույնպես մշակվում են համապատասխան տեղեկություններ: ԱԾ-ն քաղաքացիներին վերաբերող տարբեր փոխանակությունների հնարավորություն է ընձեռում: Այսինքն՝ մարդը կազատվի տարբեր կառույցներից զանազան տեղեկանքներ վերցնելու քաշքշուկներից: ԱԾ համակարգի ներդրումը հանրապետությունում իրականացնում է «Նեմրութ» տեղեկատվավերլուծական կենտրոնը: ԱԾ-ի առաքելությունը լինելու է նաեւ տարբեր ոլորտներում նույն քաղաքացու մասին թափառող, հաճախ տարաբնույթ տվյալների ճշտումը: Թվային 10 նիշերի համակցությունն անձի մասին տվյալների նույնականացումն է՝ մեկընդմիշտ եւ վերջնականապես: 2004 թ. հուլիսի 1-ից ԱԾ-ի կիրառումը պարտադիր կարգով պիտի իրականացնեն նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք, ըստ իրենց աշխատանքի բնույթի, քաղաքացիների անհատական տվյալների հետ կապված որեւէ գործառույթ են իրականացնում: ԱԾ-ի ներդրման առաջին շահագրգիռը հարկային մարմիններն են, որոնք եկամտահարկի, գույքահարկի, հողի հարկի հետ կապված պարբերաբար բախվում են անլուծելի, չճշգրտվող խնդիրների: Ակնկալվում է, որ նոր համակարգի ներդրումը պիտի հստակեցնի նաեւ կենսաթոշակային ոլորտի աշխատանքը: 2500 մասնագիտություններ կան (սահմանված նորմայից բարձր աղմուկի, աշխատանքային վտանգավոր պայմանների դեպքում եւ այլն), որոնցով զբաղվածներն արտոնյալ թոշակ ստանալու իրավունք ունեն: Բայց առայժմ նրանք բոլորը, ինչպես աշխատանքային մեծ ու փոքր ստաժ ունեցողները, վճարվում են նույն սկզբունքով:

Ըստ կարգի, ԱԾ տեղեկատվական բազա պարունակող համակարգչից կարող են օգտվել միայն սոցաղ նախարարության եւ «Նեմրութ» կենտրոնի սահմանափակ թվով աշխատակիցներ: Տեղեկատվական բազայում առկա տարաբնույթ տեղեկությունը պաշտպանելու համար այն չի միացվի որեւէ ներհանրապետական կամ արտաքին տեղեկատվական ցանցի: Մշակվել է նաեւ համակարգչային ծրագիր, որը կողմնակի անձանց եւ հակերների համար անմատչելի կդարձնի այն: Իսկ եթե մարդն, այնուամենայնիվ, հայտնաբերում է, որ իր անհատական տվյալները ինչ-ինչ հանգամանքներում ի չարն են օգտագործվել, ապա, 2002 թ. հոկտեմբերի 8-ին ընդունված «Անհատական տվյալների մասին» օրենքի համաձայն, նա կարող է հայց ներկայացնել դատարան:

Իհարկե, նոր համակարգի ներդրումը հանրապետությունում իրականացնում է «Նեմրութ» կենտրոնը: Ազգաբնակչության մասնակցությամբ պետությունը նպատակ ունի ամենից առաջ կառավարելի դարձնել իր քաղաքացիների մասին խայտաբղետ տեղեկությունները: Բայց դրանց գաղտնիության ապահովումը վստահելի կարող է լինել գոնե որոշակի կենսամակարդակով ու զարգացմամբ երկրի համար, որն ունի նաեւ իր քաղաքացիների անվտանգության ապահովման կուռ կառույցներ: Սի բան, որով չենք կարող հպարտանալ: Այդ դեպքում ԱԾ ներդրումը չի՞ նշանակի արդյոք, որ մենք ցանկացած մարդու մասին մշակված ամփոփ տեղեկությունները սկուտեղի վրա մատուցում ենք անձանց ու կառույցների, այդ թվում նաեւ օտար, ովքեր մինչ այդ էլ զբաղվում էին դրանով, բայց հիմա գործունեության ավելի թափանցիկ դաշտ կունենան: ԱԾ ներդրումն առաջին հերթին հարվածելու է սվերային զբաղվածության շահերին: Գործատուին ձեռնտու չէ իրական ծախսերը ներկայացնել, որպեսզի հարկեր քիչ վճարի: Բայց ո՞վ է ասում, որ համակարգի ներդրումից հետո նա աշխատողին թույլ կտա իրական տվյալներ ներկայացնել աշխատավարձի վերաբերյալ: Եվ աշխատողն էլ, գործազուրկ չդառնալու վախից, ստիպված չի լինի համաձայնել գործատուի հետ: Իսկ նրա շահերը պաշտպանող արհեստակցական միությունները, որոնց կարող է դիմել օգնության ակնկալիքով, վաղուց հիշողություն են դարձել: Այնուամենայնիվ այս միջոցառումն իրականացնելուց առաջ գուցե թե պետք էր կենդանացնել նախ այդ կառույցները:

ԳԱԲԻԼԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Մի տաշտակ ջուր, էն էլ՝ երկնքից կախված

Ստեփանակերտի համար ջրամատակարարման հարցը միշտ էլ եղել է առաջնահերթ: Տասնամյակներ շարունակ ամենատարբեր մակարդակներով հուզվելով, այն այդպես էլ չի լուծվել: Ջրաբաշխման ժամանակացույցը քաղաքի տարբեր թաղամասերում նույնպես տարբեր է՝ բնակչության մեջ խտրականության տպավորություն ստեղծելով:

Ոլորտի պատասխանատուները խնդրի չլուծվելը բացատրում են զտիչ կայանի հնացածությամբ: Շուրջ 50 տարի առաջ կառուցված ավազորսիչը, կարելի է ասել, այլեւս իր նպատակին չի ծառայում: Կայանի աշխատակիցների խոստովանությամբ, ջուրը զտիչ կայան է հասնում առանց լրիվ մեխանիկական մաքրման: Իսկ ինքը՝ զտակայանը, ավելի քան 70 տարվա կենսագրություն ունի:

Այս ամենը չի խանգարում, որ կայանում ասեն, թե քաղաքի բնակչությանը մատակարարվող ջուրը միանգամայն անվտանգ է առողջության համար:

Ստեփանակերտում խմելու ջրի հիմնախնդիրը զգացել է տալիս առանձնապես գարնան ամիսներին, երբ ձնհալից ու անձրեւներից վարարած Ղայբալու գետը, որը մայրաքաղաքի հիմնական ջրատարն է, իր հետ տիղմ է բերում, պղտորելով խմելու համար նախատեսված ջուրը: Ջրակայանը տեխնիկապես ի վիճակի չէ ջուրը ցեխազերծել, իսկ բնակիչներն էլ մխիթարվում են այն հույսով, թե վարարումը ժամանակավոր է:

Այս տարվա գարունը ոչ միայն բացառություն չէ, այլեւ առանձնահատուկ է նրանով, որ այս ձմռանը անհամեմատ շատ տեղացած ձյունը սարերում սկսել է հալչել, ավելացրած նաեւ՝ հորդառատ անձրեւները: Գետաբերուկների պատճառով այս օրերին խցանվել է զտիչ կայան տանող ջրատարի խողովակը: Ստեփանակերտի «Ջրմուղ-կոյուղի» ՊՓԲԸ գործադիր տնօրեն Վ. Արզումանյանի խոսքերով, անհրաժեշտ ամեն ինչ արվում է մայրաքաղաքում ջրամատակարարումը անխափան դարձնելու համար: Բայց, միեւնույն է, ջրատարում գտյացած տիղմի պատճառով ջուրը դարձել է անօգտագործելի: Անհրաժեշտ են հորդառատ տեղումներ, որպեսզի ջրատար խողովակը աղբից մաքրվի: Իսկ եղանակի մթահաճույքներից կախված չլինելու եւ դրա հետ կապված՝ բնակչությանն առանց ջրի չթողնելու նպատակով, այս օրերին գործի են դրվել Ստեփանակերտի 3 պոմպակայանները եւ 7 արտեզյան ջրհորները: Դրանք սովորաբար գործի են դրվում ամռան ամիսներին, երբ տեւական շոգերի պատճառով ջուրը պակասում է: Ըստ նոր ժամանակացույցի, այժմ ստեփանակերտցիներին ջուր տրվում է առավել սահմանափակված ժամկետով:

Թե ինչքան կտեւի այս վիճակը, կախված է եղանակից: Իսկ գարունն Արցախում նոր է թափ առնում՝ անձրեւային անակնկալներով հանդերձ:

ԳԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ստեփանակերտ

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Անշարժ գույքի գրանցումը կլինի ավտոմատացված

Առաջիկա երեք տարիներին անցում կկատարվի Հայաստանում անշարժ գույքի գրանցման ավտոմատացված համակարգին: Այդ նպատակով Շվեդիայի միջազգային զարգացման գործակալությունը տրամադրել է 1 մլն դոլար դրամաշնորհ: Պայմանագիրը, համաձայն որի տրամադրվում է դրամաշնորհը, կնքվեց երեկ՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Մանուկ Վարդանյանի եւ Շվեդիայի կադաստրի պետական «Սվիդստվեյ» ընկերության ներկայացուցիչ Օլե Օլսոնի կողմից: «Կադաստրի համակարգի զարգացումը Հայաստանում» ծրագիրը սկսել է իրագործվել 1999 թ.: Ծրագրի առաջին՝ եռամյա փուլում աշխատանքներն ուղղված էին Հայաստանում գեոդեզիական ցանցի ներդրմանը՝ օգտագործելով նորագույն տեխնոլոգիաները, հողերի միավորմանը եւ խոշորացմանը, անշարժ գույքի գնահատման ուկայական մեթոդների ներդրմանը: Առաջին փուլին հատկացված դրամաշնորհը մոտ 600 հազար դոլար էր:

Ծրագրի երկրորդ փուլը, ինչպես արդեն նշվեց, ուղղված է լինելու անշարժ գույքի գրանցման ավտոմատացմանը՝ համակարգչային ձեւով: Դա նշանակում է, որ եթե նախկինում գործընթացը կատարվում էր 15 օրում, այժմ՝ 3 օրում, ապա այս դեպքում՝ մեկ օրում կամ մի քանի ժամում: Տեղեկության տրամադրումը նույնպես ժամերի խնդիր կլինի: Կնվազեն նաեւ այդ ծառայությունների սակագները, քանի որ կիջնի դրանց ինքնարժեքը, աշխատակազմն ավելի փոքր կլինի, թղթաշրջությունը կվերանա: Այս տարվա ընթացքում ավտոմատացված համակարգը կներդրվի կադաստրի շուրջ 20 տարածքային ստորաբաժանումներում: Ամբողջությամբ

Շվեդիայի կադաստրի պետական «Սվիդստվեյ» ընկերության ներկայացուցիչ Օլե Օլսոնի կողմից: «Կադաստրի համակարգի զարգացումը Հայաստանում» ծրագիրը սկսել է իրագործվել 1999 թ.: Ծրագրի առաջին՝ եռամյա փուլում աշխատանքներն ուղղված էին Հայաստանում գեոդեզիական ցանցի ներդրմանը՝ օգտագործելով նորագույն տեխնոլոգիաները, հողերի միավորմանը եւ խոշորացմանը, անշարժ գույքի գնահատման ուկայական մեթոդների ներդրմանը: Առաջին փուլին հատկացված դրամաշնորհը մոտ 600 հազար դոլար էր:

Ծրագրի երկրորդ փուլը, ինչպես արդեն նշվեց, ուղղված է լինելու անշարժ գույքի գրանցման ավտոմատացմանը՝ համակարգչային ձեւով: Դա նշանակում է, որ եթե նախկինում գործընթացը կատարվում էր 15 օրում, այժմ՝ 3 օրում, ապա այս դեպքում՝ մեկ օրում կամ մի քանի ժամում: Տեղեկության տրամադրումը նույնպես ժամերի խնդիր կլինի: Կնվազեն նաեւ այդ ծառայությունների սակագները, քանի որ կիջնի դրանց ինքնարժեքը, աշխատակազմն ավելի փոքր կլինի, թղթաշրջությունը կվերանա: Այս տարվա ընթացքում ավտոմատացված համակարգը կներդրվի կադաստրի շուրջ 20 տարածքային ստորաբաժանումներում: Ամբողջությամբ ներդնելուց հետո կստեղծվի համընդհանուր տեղեկատվական ցանց, որը հնարավորություն կտա անշարժ գույքի վերաբերյալ ցանկացած տեղեկություն ստանալ՝ առանց կադաստրի տարածքային ստորաբաժանում գնալու:

Պայմանագրի ստորագրման արարողությունից հետո անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նախագահն, անդրադառնալով ոլորտի կացությանը, նշեց, որ շուկայում արձանագրվել է գների աճ՝ հատկապես մայրաքաղաքի կենտրոն եւ Արաբկիր համայնքներում: Անշարժ գույքի գներն Արարատյան դաշտում կայունացել են:

Շվեդական կողմի ներկայացուցիչը ներկայացրեց անշարժ գույքի կառավարման շվեդական ավտոմատացված համակարգը:

Ա. Մ.

«Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելը ձեռնտու է փոքր երկրներին»

Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի անդամակցելուց հետո էլ չի դադարում տեսակետների բախումը դրա դրական եւ բացասական հետեւանքների մասին: Այս հարցի շուրջ լրացուցիչ պարզություն մտցնելու նպատակ էր հետապնդում երեկ Թեթեյան կենտրոնում տեղի ունեցած միջոցառումը, որտեղ ներկայացվեցին այդ կազմակերպության պատմությունը, սկզբունքները եւ Հայաստանի տնտեսության վրա ազդեցությունը:

Հիմնական ելույթ ունեցողը Bering Point/Barents Group-ի ԱՀԿ հարցերով խորհրդատու Ալեն Մորլին էր, որին նախորդել էին առեւտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Տիգրան Դավթյանի եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության Հայաստանում ներկայացուցիչ Քիս Սիմոնսի ներածական ելույթները:

Անդրադառնալով Հայաստանի անդամակցմանն Ալեն Մորլին մեր երկրի գլխավոր առավելությունը համարեց այն, որ նրան վստահում են: Հայաստանն ապացուցել է, որ բոլոր պահանջները բավարարում է եւ ընդունել է բոլոր անհրաժեշտ օրենքները: Ուշադրության հիմնական ոլորտներն են հարկային օրենսդրությունը, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը, առեւտրի սերտիֆիկացման պահանջները, մախսային արժեքի որոշումը: Նշվեց, որ վերջինիս առնչությամբ դեռեւս խնդիրներ կան, որոնք կարգավորվում են աստիճանաբար: ԱՀԿ-ի դրույթներին համապատասխանեցնելու անհրաժեշտություն ունեցող օրենքներ չկան, Հայաստանին մնում է միայն համապատասխանեցնել ենթաօրենսդրական ակտերը:

Մեր երկրի համար մտահոգություն հարուցող գլխավոր գյուղատնտեսությունն ավելացված արժեքի հարկով հարկելու հարցի կապակցությամբ Ալեն Մորլին նախ վերսին հիշատակեց, որ դրա համար սահմանված է 6 տարվա անցումային շրջան մինչեւ 2009 թ. սկիզբը: Այդ ընթացքում, ըստ նրա, պետք է մշակվի այն մեխանիզմը, որով պետք է հարկվեն գյուղացիական տնտեսությունները: Սակայն ելույթ ունեցողն այստեղ լուրջ խնդիր չի տեսնում, քանի որ, նրա հավաստմամբ, որքան հարկվի գյուղատնտեսությունը, ճիշտ նույն չափով էլ պետությունը պետք է լրավճար (դոտացիա) հատկացնի: Այս հավաստիացումն այնքան էլ արժանահավաս չի թվում, որովհետեւ նույն հարցի առնչությամբ մեր պետական պաշտոնյաներից մեկից որոշակի ժամանակ առաջ ստացված պատասխանն այլ էր: Մասնավորապես նա խորհուրդ տվեց դեռեւս չնշել, որ հարկվող գումարն ու հատկացվող լրավճարը նույն չափի կլինեն, որովհետեւ այստեղ առայժմ ամեն ինչ հստակ չէ: Ինչպես:

Շարունակելով արդեն ԱՀԿ-ի առավելությունների մասին խոսել, ելույթ ունեցողն առանձնացրեց, որ այն նպաստում է խաղաղության պահպանմանը: Դա բացատրվեց նրանով, որ վաճառողները սովորաբար հակված չեն պատերազմելու իրենց գնորդների հետ: Որպես օրինակ նշվեց եվրամիությունը, որի անդամ երկրների միջեւ 60-70 տարի առաջ պատերազմներ էին լինում:

ԱՀԿ-ի առեւտրային համակարգի կարեւոր առավելություններից մեկն այն է, որ անդամ պետություններին պայմաններ չեն թելադրվում, եւ որոշումներն ընդունվում են փոխհամաձայնությամբ: Դա, ըստ Ալեն Մորլիի, ձեռնտու է հատկապես Հայաստանի նման փոքր երկրներին, քանի որ կարեւորվում է նրանց ձայնը:

Այս ելույթից հետո Ալեն Մորլին եւ առեւտրի ու տնտեսական զարգացման փոխնախարար Տիգրան Դավթյանը պատասխանեցին սեմինարի մասնակիցների հարցերին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Մի ամսան տաք կերակուր՝ ի նշան երախտագիտության

Բազմազավակների հոգսերը բազմազավակներինն են

Սարիամ եւ Վարդան Արմենյաններին իրենց 10 անչափահաս երեխաների կիսաֆաղց ու կիսամերկ վիճակից առավել այսօր անհանգստացնում են այն սարսափազդու պայմանները, որում ապրում են նրանք: Երեւանի Լամպերի գործարանին պատկանող երբեմնի «Աստղիկ» հանրակացարանը, ուր 1988 թ.-ից հետո բնակեցրել էին նրանց՝ աղետալի երկրաշարժից տուժած եւ Ադրբեջանից բռնագաղթած փախստական ընտանիքների հետ, արդեն լքյալ շինության է վերածվել: Ժամանակավոր կացարանի բնակիչները տուն են սացել ու հեռացել՝ հսկայական շինությունը թողնելով Արմենյանների «տնօրինությանը»: «Բնակիչների հեռանալուց հետո առնեսնելը վրա են տվել, կրծոտել են հագուստները, դռները, սարսափի մեջ ենք ապրում, բայց սանիտարիայանին անգամ դիմել չենք կարող, հեռախոս չկա, որ զանգենք», խեղճացած ձայնով պատմում է տիկին Սարիամը:

Թալանված ու կիսավեր շինության մեջ միայնության դատապարտված ընտանիքը շրջապատի ահաբեկող լռությանն ու առնետների գրոհին մի կերպ դիմակայում է այն հուսադրող խոստումներին հավատալով, որ հեռու չէ այն օրը, երբ վերջապես իրենք էլ տուն կունենան: Հավատացրել են, որ Երեւանի քաղաքապետարանը նրանց ընդգրկել է «Հուսո ավան» նորակառույց թաղամասի առաջին բնակիչների ցանկում, որի բացումը կատարվելու է մայիսի 28-ին:

Տիկին Սարիամին մարտ ամսին հանդիպեցինք հանրակացարանի շեմին: Ասաց, որ ուզում էր գնալ մոտակա խանութից ձու խնդրել նախաճաշի համար, բայց այնքան է պարտքը կուտակվել, չգիտի՝ վաճառողն այս անգամ էլ կընդառաջի՞: Եթե չտվեց, պետք է սպասեն մինչեւ ժամը 14:00-ը, երբ Հայորդաց տան ճաշարանից կտանեն օրվա ճաշը: Տիկին Սարիամը 7 աղջիկ եւ 3 տղա է մեծացնում, բայց ճաշը տրվում է 6 երեխայի համար: Ժամը 11-ն անց էր, նրանք դեռեւս չէին նախաճաշել, տիկին Սարիամի ասելով, վերջին ամիսներին այդպես հաճախ է պատահում: «Մենք 12 հոգի ենք եւ ամսական 2 պարկ ալյուր է պետք, որ հացը բավականացնի: Առաջիր համայնքի նախկին քաղաքապետի ժամանակ օրական 6 հաց էին տալիս, նաեւ բաղնիքի կտրոն, բայց 4 ամիս է արդեն այդ էլ չեն տալիս: Նոր քաղաքապետն ասում է՝ «զգվեցրիր, հո միայն դու չես»:

Ընտանիքի հայրը՝ Վարդան Արմենյանը, աշխատել է «Գրանդ Սան» գործարանում, բայց 2002 թ. նոյեմբերի կեսերից նրանց արտադրամասի գործունեությունը դադարեցվել է: Ընտանիքի ունեցած միակ եկամուտը աղքատության ընտանեկան նպաստն է: «19 հազար դրամ ենք ստանում, բայց դա օճառի ու լվացող հեղուկներին անգամ չի բավականացնում: Ամեն օր լվացք ենք անում»: Տարեմուտին «Արայ» խանութը հեռուստացույց է նվիրել նրանց: Երեխաները շատ են ուրախացել հեռուստախաղի ժամանակ իրենց անունը շահածների ցանկում լսելով: Սակայն, ուրախությունը կարճ է տեւել, երկու ամիս հետո մայրը ասել է, որ վաճառելու է հեռուստացույցը՝ սնունդ գնելու համար: «Այլեւս ելք չունենք», կտրուկ ասաց տիկին Սարիամը:

Երեխաներից 5-ն էին այդ օրը տանը, աղջիկներից երեքը կոշիկ չունենալու պատճառով դպրոց չէին գնացել, երկուսը դեռեւս դպրոցահասակ չեն: Սկզբում երեխաները Երեւանի թիվ 77 դպրոցն են հաճախել, բայց արդեն 5 տարի Առաքիր համայնքի թույլ տեսնող երեխաների գիշերօթիկ դպրոցում են սովորում: «Երեխաներս լիովին առողջ են, բայց ես փող չունեմ, որ նրանց հանրակրթական դպրոց ուղարկեմ: Գիշերօթիկում լավ է, մինչեւ ժամը 6-ն այնտեղ են՝ կերակրվում են, լողանում, գրքի ու տետրի փող չենք տալիս», ասում է մայրը՝ միաժամանակ, ցավ հայտնելով, որ երեխաներն իրենց ունակություններին համապատասխան կրթություն չեն ստանում:

Արմենյաններին Գյումրիից Երեւան են տեղափոխել իրենց երեք երեխաների հետ, երկրաշարժից նրանց տունը լրիվ ավերվել է: Այս 7 երեխաները ծնվել են հանրակացարանում: Հանրակացարանի այն սենյակում, որ զբաղեցնում է նրանց 12 հոգանոց ընտանիքը, 3 հնամաշ մահճակալ էր դրված, մի կոտրված պատսպարան եւ մի քանի զգեստապահարան: «Երեխաներն առաջ հատակին էին քնում, հանրակացարանից հեռանալուց առաջ փախստականները չնչին գներով ինձ վաճառեցին իրենց պահարանները, մահճակալներն ու ներքնակները, որոնք նրանց տվել էին գործածելու համար, դեռ գումարն էլ չեմ տվել», պատմեց տիկին Սարիամն՝ այդ ամենն առաջընթաց համարելով իր ընտանիքի համար:

«Հայաստանի մայրության ֆոնդի» նախագահ Սուսաննա Ասլանյանի ասելով, Արմենյանների ընտանիքի պատկերն ընդհանրական է հանրապետության գրեթե բոլոր բազմազավակ ընտանիքների համար: Փոքրաթիվ բազմազավակ ընտանիքներ կան, որոնք ապահովված են, եւ նրանց համար իրենց կազմակերպությունը մշակութային ծրագիր է իրականացնում: «10 եւ ավելի երեխա ունեցող այն բազմազավակ ընտանիքները, որոնց երեխաները վերջին տարիներին են ծնվել՝ դպրոցահասակ եւ մանկապարտեզային տարիքի են, անասելի դժվարին պայմաններում են ապրում», ասում է նա: Ս. Ասլանյանը շեշտեց, որ մարդասիրական օգնությունները չեն թեթեւացնում նրանց հոգսը: Ընտանիքներ կան, որոնց հայրերը հանրապետությունում չեն: Ընտանիքը մասնատված է՝ երեխաները տատիկ-պապիկների հույսին են, լավագույն դեպքում՝ տուն ինտերնատներում են տեղավորել: Մայրերը մխիթարության համար ասում են. «Գոնե այնտեղ 3-4 անգամ կերակրում են, ասում է նախագահը»: Վերջինս փոխանցեց բազմազավակ մայրերի դժգոհությունը՝ «պետությունը մեզ հիշում է միայն որդիներին զինվորագրելուց»:

Տիկին Ասլանյանի նկարագրած իրավիճակներից մեկին ականատես եղանք երեւանաբնակ Գագիկ Հովհաննիսյանի ընտանիքում: Նա արցախյան ազատամարտի մասնակից է, 1991-94 թթ. կռվել է «Արաբո» ջոկատի կազմում: Կինը՝ Արմենուհի Մանուկյանն ընդամենը 31 տարեկան է եւ արդեն 9 երեխա ունի, վերջինը 2003 թ. փետրվար ամսին է ծնվել: Նրանք իրենց երեք մանկահասակ երեխաների հետ ներկայումս բնակվում են քաղաքից դուրս՝ մի հողաբեն ծածկի տակ:

«1996 թ.-ից հեռացել ենք հայրական տնից, այս տարիներին տարբեր տեղերում ենք ապրել՝ հարազատների, ծանոթների մոտ եւ այլն: Հիմա երեխաներն են այդ վիճակում», պատմեց Գ. Հովհաննիսյանը: Երեխաները ժամանակ առ ժամանակ տեղավորվել են՝ մեկը մանկատանը, մյուսը՝ տատիկի մոտ, մի քանիսը՝ Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) գիշերօթիկ դպրոցում եւ այլն: Երեխաներից 5-ը ներկայումս Քաջաքաղի գիշերօթիկում են՝ ՀՕՖ-ի միջամտությամբ:

«Երեխաներին տեղավորեցին գիշերօթիկում, բայց մեզ կացարանով չապահովեցին: Կինս մանկահասակ երեխաների հետ տեղավորվեց իր հարազատների մոտ, իսկ ես՝ իմ եղբոր: Մեզ լուր տվեցին, որ բնակարան են հատկացնում՝ Լաչինից վերադարձնք ու հայտնվեցինք փողոցում: Քաղաքապետարանում ասացին՝ նման բան չկա, պետք է սպասեք: Հայտնաբերեցինք այս կացարանը ու տեղավորվեցինք այստեղ, այդ ընթացքում ծնվեց մեր 9-րդ երեխան», պատմեց նախկին ազատամարտիկը:

Նրանք մի կերպ էին տեղավորվել նեղլիկ, հողաբեն կացարանում եւ ափսոսում էին, որ չեն կարող իրենց 6 երեխաներին երեւան տեղափոխել: «Ուզում եմ երեխաներս կողիս լինեն, նորմալ կրթություն ստանան: Առողջ երեխաներ են: Իբրեւ ծնող, ես պարտավոր եմ հոգ տանել նրանց կրթության մասին», ասում է Գագիկ Հովհաննիսյանը: Նրա 6 երեխաները դպրոցահասակ են, սակայն ինչպես հայրն է ասում՝ երբեք կանոնավոր դպրոց չեն հաճախել, որովհետեւ մշտական հասցե չեն ունեցել: «Բայց, քանի որ կոված տղա եմ՝ երեխաներիս ընդառաջել են եւ տեղավորել այս կամ այն դպրոցում՝ առանց փաստաթղթերի: Գրենական պիտույքների հարցը լուծել են բարեգործական կազմակերպությունները, հագուստինը՝ նույնպես, բայց տարիներ արդեն ընտանիքս մի հարկի տակ չեմ կարողանում հավաքել», ցավով նշեց նա:

«Հայաստանի մայրության ֆոնդը» 1998 թ.-ին հարցում է անցկացրել բազմազավակների շրջանում՝ նրանց խնդիրներն ու ցանկությունները պարզելու համար: Պարզվել է, որ բազմազավակ ընտանիքների ամենամեծ մտահոգությունը բնակարան չունենալն է: Հարցվողների 58 %-ը խիստ անբավարար է համարել բնակարանային պայմանները, իսկ 31 %-ը՝ անբավարար: Կոմունալ, սննդային եւ այլ հարցերից բացի, նրանք պահանջել են հատուկ կարգավիճակ տալ բազմազավակներին, վերականգնել արտոնությունները, հատկապես կրթության ու առողջապահության ոլորտում: Հարցումը պարզել է, որ բազմազավակների 82 %-ին մատչելի չեն առողջապահական ծառայությունները: «Կանայք կան, որ ամեն տարի ծննդաբերում են, նրանք տարբեր պաթոլոգիաներ են ձեռք բերում եւ հատուկ հսկողության տակ պետք է լինեն: Անցյալ տարի 7 մայր մահացավ՝ հիվանդություններից», ասում է «Մայրության ֆոնդ» ՀԿ-ի նախագահը:

Նա տեղեկացրեց, որ անցնող տարիների ընթացքում բազմազավակ ընտանիքների համար տարբեր ծրագրեր են իրականացրել: Փորձնական երեք հիվանդանոց են առանձնացրել նրանց համար, երկուսը՝ Երեւանում, մեկը՝ Գյումրիում, կազմակերպության միջամտությամբ անվճար վիրահատվել է մի քանի կին, սակայն դա հարցի լուծում չէ: Կազմակերպությունը ձեռնարկել է «Բազմազավակ ընտանիքների սոցիալական աջակցության մասին» օրենքի մշակումը, ցանկանալով փոխել բազմազավակ ընտանիքների նկատմամբ պետության քաղաքականությունը եւ վերականգնել սոցիալիստական Հայաստանում բազմազավակների համար սահմանված արտոնությունները ու կոչումները: Ի վերջո օրենքով ամրագրել, թե քանի՞ երեխա ունեցողը կարող է համարվել բազմազավակ:

Քանի՞ երեխա ունեցողն է համարվում բազմազավակ

«Բազմազավակ ընտանիքն այն թիրախ խմբերից մեկն է, որ չունի կարգավիճակ», ասում է «Մայրության ֆոնդի» նախագահը եւ նշում, որ իր ղեկավարած կազմակերպությունում բազմազավակ են համարում 4 եւ ավելի երեխա ունեցողներին: Սակայն, Հայաստանի ժողովրդագրական պատկերից ելնելով, ճիշտ է համարում, որ օրենքով բազմազավակ համարվի 3 եւ ավելի երեխա ունեցողը: Մեզ, անշուշտ, հետաքրքրում էին բազմազավակ ընտանիքների նկատմամբ ՀՀ կառավարության մոտեցումները՝ ի՞նչ արտոնություններ կամ առավելություններ ունեն նրանք եւ ի՞նչ է արվում նրանց համար:

«Բազմազավակի միասնական սահմանում չկա, արտոնությունները նրանց տրվում են տարբեր չափանիշներից ելնելով», հայտնեց սոցիալական նախարարության իրավաբանական բաժնի պետ Հովանուշ Գորոյանը: Այսպես. աղետի գոտում բազմազավակ է համարվում երեք եւ ավելի երեխա ունեցող ընտանիքը, ընտանեկան նպաստների համակարգում՝ 4 եւ ավելին, տրանսպորտի նախարարության համար արտոնություն ունեցողը՝ 5 եւ ավելի երեխան է եւ այլն: Նա թվարկեց նաեւ պետության սահմանած արտոնությունների աղքատիկ ցանկը, որի ոչ բոլոր կետերն են նույնիսկ կիրառելի: Օրինակ, 5 եւ ավելի երեխա ունեցող ընտանիքներին եւ «Հերոսուհի մայր» կոչում ունեցող մայրերին բնակարանային օրենսգրքի 38 հոդվածի համաձայն, տրվում է առաջնահերթ բնակարածության իրավունք: Հ. Գորոյանը չմոռացավ նշել, որ վերջին կետը չի գործում, քանի որ հանրային ֆոնդերից բնակարանային հատկացումներ համարյա չեն կատարվում: Բայց ահա վերջին 13 տարիների ընթացքում առաջին անգամ բնակարանային հատկացումների հնարավորություն է ստեղծվել Երեւան քաղաքում եւ միայն Երեւանցիների համար:

«Հույսի ավան»

Մայիսի 28-ին Երեւանից-Աշտարակ տանող ճանապարհին կյանք կստանա անապահով ընտանիքների համար կառուցվող «Հույսի ավան» թաղամասն իր առաջին 13 առանձնատներով: 200 անապահով ընտանիքների համար նախատեսված նորակառույց թաղամասում առաջին բնակարանամուտը կտոնեն 20 ընտանիքներ: Թաղամասի հիմնադիրները գերմանահայ Ջանբազյանների ղեկավարած «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամն է՝ Երեւանի քաղաքապետարանի հետ համատեղ: Թե ովքեր են լինելու առաջին երջանիկները, որոնք վերջապես տուն կունենան՝ քաղաքապետարանի սոցիալական վարչության պետ Ռուզաննա Զաքարյանը վստահեցնում է, որ հանձնաժողովը դեռեւս չի որոշել: «Չափորոշիչները շատ խիստ են, դրանք քննարկել ենք սոցպաշտպանության հետ: Դիմումները շատ են, դրանցից ամենակարիքավորներին պետք է ընդգրկենք առաջին 20-ի մեջ»:

Հանձնաժողովի կազմում, որի նախագահը Երեւանի քաղաքապետն է, ընդգրկվել են փոխքաղաքապետը, քաղաքապետի խորհրդականը, մայրաքաղաքի բոլոր թաղապետները, «Դիակոնիա» բարեգործական կազմակերպության ղեկավարը, սոցպաշտպանության ներկայացուցիչը (վերջինս տեղեկացրեց, որ ինքը ոչ մի անգամ չի հրավիրվել նիստի): Հանձնաժողովն արդեն սահմանել է ընտրության չափանիշները՝ առաջնահերթությունը տալով երկկողմանի ծնողազուրկ չափահաս դարձած այն անձանց, ովքեր պետության խնամքի տակ ունեն քույրեր եւ եղբայրներ, ծնողազուրկ երկու եւ ավելի անչափահաս երեխաներին, որոնցից մեկը 16 տարեկանից փոքր չէ, երեք եւ ավելի անչափահաս միակողմանի ծնողազուրկ երեխաներին եւ վերջում՝ 6 եւ ավելի անչափահաս երեխաներ ունեցող անօթեւան եւ անապահով ընտանիքներին, ովքեր բնակարանային հերթ ունեն թաղապետարանում, (առաջնահերթությունն՝ ըստ երեխաների թվի): Ռուզաննա Զաքարյանը նշեց, որ արդեն այցելել են որոշ ընտանիքների ու ծանոթացել նրանց պայմաններին:

Մեր այցելած անօթեւան ընտանիքները, որոնք 9 եւ 10 անչափահաս երեխաներ ունեն, կընդգրկվե՞ն առաջին 20 ընտանիքների ցանկում՝ դժվար է ասել: Ե՛վ Մ. Արմենյանը, ե՛ւ Գ. Հովհաննիսյանը հայտնեցին, որ հանձնաժողովից ոչ ոք չի այցելել իրենց, հետեւաբար չբացառեցին, որ տուն տալու մասին խոստումները սոսկ իրենց հանգստացնելու նպատակ ունեն: Հանձնաժողովն ընտրություն կատարելու հարցում պետք է որ դժվարություններ չունենա, քանի որ Երեւան քաղաքում բազմազավակ ընտանիքների, հատկապես՝ 6 եւ ավելի անչափահաս երեխաներ ունեցողների թիվը, մեծ չէ: Հարկ է նշել, որ մայրաքաղաքում 9 երեխա ունեցող ընտանիքների թիվը 7-ն է, 10 երեխա ունեցող ընտանիքների թիվը՝ 4-ը, եւ մեկ ընտանիք, որտեղ 11 երեխա է մեծանում: Երեւանում է բնակվում նաեւ հանրապետության ամենաբազմազավակ՝ 17 երեխա ունեցող ընտանիքը, որոնց մի մասը վաղուց անչափահաս չէ:

Հանրակացարանի սենյակներից մեկում տեղավորված Արմենյանների համար առաջնահերթ է դարձել իրենց 10 երեխաներին առնետների հարձակումներից պաշտպանելը. հետո միայն սնունդ հայթայթելը:



Մայրաքաղաքից դուրս՝ ամայի դաշտում հայտնաբերած այս կացարանում 9 երեխաների մայր Արմենուհի Մանուկյանին հաջողվել է տեղավորել միայն իր 3 երեխաներին: Երեխաներից 6-ն առայժմ ծնողների կողքին լինելու երազանքով են ապրում:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
«Հետաքննող լրագրողների ընկերակցություն»
www.hetq.am

Իրաքում համատարած կողոպուտը շարունակվում է

Երեկ «Ազգը» տեղեկացրեց Բաղդադում սկսված թալանի ու հրկիզումների մասին: Դրանք շարունակվում են: Սադդամ Հուսեյնի որդի Ուդեյի, փոխվարչապետ Թարեք Ազիզի տներից բացի, թալանվել է Բաղդադում Գերմանիայի դեսպանատունը: Ոմանք հաղորդում է, որ երեկ գիշեր քաղաքից արեւմուտք Սադդամ Հուսեյնի խորք եղբայր Բարզան Իբրահիմ Հասան ալ Տիկրիտիի տունը ոմբակոծել է ամերիկյան օդուժը: Նա իրաքյան հեսախուզության նախկին պետն է:

Քուրդ-ամերիկյան զորքերը լույս ուրբաթ գիշերը մտել են հյուսիսային Իրաքի Մոսուլ քաղաք: Ֆրանսդրեսը հաղորդում է, որ Սադդամ Հուսեյնի վերաբերյալ որեւէ տեղեկություն հայտնի չէ:

Հյուսիսում նավթառատ Քիրքուքի եւ Մոսուլի գրավումը ու այնտեղ քուրդ մարտիկների ներկայությունը լրջորեն մտահոգել են Թուրքիային, որը հավակնություններ ունի այդ քաղաքների նկատմամբ: Արտգործնախարար Աբդուլլահ Գյուլի նախազգուշացումից հետո երեկ Քրդստանի հայրենասիրական ճակատի հրամանատարներից մեկը՝ գեներալ Սամ Ռոստամը Ֆրանսդրեսին հայտնեց, որ քուրդ մարտիկները Քիրքուքից հեռանալու հրաման են ստացել եւ տպատում են ամերիկյան զորքերին: Քաղաքում կմնան միայն մի քանի քուրդ մարտիկներ, որպեսզի ամերիկացիներին օգնեն անվտանգության ապահովման հարցում: Անցյալում Սադդամ Հուսեյնը քաղաքից տեղահանել էր քրդերին եւ այնտեղ արաբներ բնակեցրել: Հաղորդվում է, որ արդեն Քիրքուք են բերվել ամերիկյան 173-րդ օդային բրիգադի մի գումարտակի 500 մարտիկներ:

Ասոշիեյթեդ պրեսը հաղորդում է, որ երեկ Մոսուլում բանակցություններ են սկսվել քաղաքի պատգամների անձնատության շուրջը: Մոսուլի իրաքյան զորքի հրամանատարը համաձայնել է հանձնել քաղաքը, եթե ամերիկացիները ներում շնորհեն պատգամներին եւ դադարեցնեն ռմբակոծումները: Անձնատության շուրջօրյա բանակցությունների ընթացքում խնդրի քաղաքական լուծման պայմաններ են ստեղծվելու:

Բասրայում մահմեդական քարոզիչներից մի քանիսը կոալիցիոն ուժերի հրամանատարությանը կոչ են արել քաղաքում վերջ դնել զանգվածային կողոպուտներին եւ պարեսային ժամ հաստատել, քանի որ պետության, երբեմն էլ հարեւանների ունեցվածքը թալանող իրաքցիներն իրական սպառնալիք են ստեղծում քաղաքացիների անվտանգության համար:

Այդ մասին հայտարարել է ԱՄՆ կենտրոնական հրամանատարության ներկայացուցիչ, գեներալ Վիկտոր Ռենուարտը: Սակայն նա հասկացրել է, որ դաշնակից ուժերը չեն օգտագործում վերջ դնել Իրաքի փաստորեն բոլոր քաղաքները ճարակած զանգվածային թալանին: Իսկ պարեսային ժամ մտցնելու հարցն առհասարակ չի քննարկվել: Գեներալ Ռենուարտի խոսքերով, ներկայումս Իրաքում դաշնակից ուժերի բեկչության հետեւանքով զոհվել են ամերիկացի 3 ծովային հետեւակայիններ, 22-ն էլ վիրավորվել են: Նույն օրը Շիաների սրբազան քաղաք Նաջաֆի մզկիթներից մեկում սպանվել է հոգեւորական Աբդուլ Մաջիդ ալ Խոյին (այդ մասին «Ազգը» գրել է): Նա մեծ այաթոլլա Ալի Սիստանիի մերձավորներից էր: Վտանգ կա, որ սպանությունը կարող է խռովություններ առաջացնել Իրաքի բնակչության 60 տոկոսը կազմող շիա համայնքում, մինչդեռ ԱՄՆ-ի հովանու ներքո շուտով քննարկվելու է հետսադդամյան ժամանակավոր կառավարություն կազմելու հարցը:

Պ. Ք.

«ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ» ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՄՆ-ը եվրոպացիներին խնդրում է մոռանալ Իրաքի պարտքերը

ԱՄՆ-ը Ռուսաստանին, Ֆրանսիային եւ Գերմանիային առաջարկել է քննության առնել Իրաքի պարտքերը չեղյալ հայտարարելու հնարավորությունը: Պաշտպանության առաջին փոխնախարար Պոլ Վոլֆովիցը հայտարարել է, որ ամերիկյան վարչակազմը դա համարում է Իրաքի հետպատերազմյան վերականգնմանը Մոսկվայի, Փարիզի եւ Բեռլինի ավանդի հնարավոր ձեւերից մեկը:

Կոնգրեսականների առջեւ ելույթ ունենալիս Վոլֆովիցը պարզաբանել է. «Այդ երկրները կարող են շատ բան անել, օրինակ, մտածել շատ մեծ պարտքերի մասին, որոնք գոյացել են զենքի գնման, պալատների կառուցման եւ բռնության միջոցների ստեղծման նպատակով Հուսեյնին տրված վարկերից»:

Նրա կարծիքով, եվրոպական 3 տերությունները պետք է մտածեն պարտքերը մասամբ կամ ամբողջովին չեղյալ հայտարարելու մասին, «որպեսզի Իրաքի նոր կառավարությունը չծանրաբեռնվի դրանցով»:

Ի դեպ, Իրաքի ապագա կառավարության կազմավորման հարցերով զբաղվում է հենց Վոլֆովիցը: «Ազգն» արդեն գրել է, որ այդ կառավարությունն ունենալու է ամերիկացի նախարարներ: ԱՄՆ-ի շահերի մասին չխոսելով, Վոլֆովիցն ասել է, թե իրաքցիները «կողջունեին» եվրոպացիների օգնության այդ ձեւը:

Միայն Ռուսաստանին Իրաքը պարտք է 7-8 միլիարդ դոլար: Ստույգ թիվը հայտնի չէ, քանի որ ՄԱԿ-ի հակաիրաքյան պատժամիջոցների ձեռնարկումից հետո պարտքի վճարման հարցը հարկ եղավ հետաձգել անորոշ ժամկետով: Հետաքրքրական է, որ Իրաքի պատերազմից առաջ կայացած խորհրդակցությունների ընթացքում ամերիկացիները ռուսներին խոստացել էին Բաղդադի նոր իշխանությունների վրա ճնշում գործադրել ՈՂ պարտքի վճարումների հարցում:

Ժան Մարի լը Պենն արտաքսվել է Եվրախորհրդարանից



Ֆրանսիացի հայտնի աջ ծայրահեղական ազգայնական գործիչ Ժան Մարի լը Պենը, որը նախագահական վերջին ընտրություններում ժակ Շիրակի գլխավոր ախոյանն էր, զրկվել է Եվրախորհրդարանի պատգամավորի մանդատից: Նրա առջեւ փակ են Բրյուսելում եւ Ստրասբուրգում գտնվող Եվրախորհրդարանի շենքերը:

«2003 թ. ապրիլի 10-ից պրն լը Պենն այլեւս Եվրախորհրդարանի պատգամավոր չէ», ասվում է խորհրդարանի հայտարարության մեջ, որը հիմնված է Լյուքսեմբուրգում գտնվող ԵՄ առաջին ատյանի դատարանի վճռի վրա:

Ֆրանսիայի ազգայնամոլների առաջնորդը կարող է գանգատարկել վճիռը, բայց դա հազիվ թե ազդի իրեն Եվրախորհրդարանից արտաքսելու եվրապատգամավորների որոշման վրա:

Այս կապակցությամբ ՌԻԱ գործակալությունը հիշեցնում է, որ 2000 թ. Ֆրանսիայի դատարանը պետական ու եվրոպական կառույցներին լը Պենի մասնակցությունն անհնար էր համարել այն բանից հետո, երբ նա երկրի 1997 թ. խորհրդարանական ընտրարշավի ընթացքում բռունցքներով հարձակվել էր կին քաղաքական գործիչներից մեկի վրա: Դրանից հետո լը Պենը գանգատարկման հայցով դիմել էր Եվրախորհրդարան, սակայն մերժում էր ստացել:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անկախ Թուրքիայի սպառնալիքներից՝ քրդերի առաջխաղացումը հյուսիսային Իրաքում շարունակվում է

Առանց դիմադրության Բաղդադի անկումը եւ այնտեղ Սադդամ Հուսեյնի իշխանության տապալումն անսպասելի էր իրաքցիների, անգլո-ամերիկյան ուժերի, ինչպես նաեւ այն պետությունների համար, որոնք ոչ ոք չէին տալիս ԱՄՆ-ի սանձազերծած հակաիրաքյան պատերազմին:

Այս պետություններից յուրաքանչյուրը պատերազմին հակադրվելու ուրույն պատճառներ ուներ: Եթե Ֆրանսիային, Գերմանիային, Ռուսաստանին հուզում էին այն տնտեսական եւ քաղաքական շահերը, որոնք նրանք հետապնդում են Իրաքում, ապա արաբական երկրներին մտահոգում է պատերազմի օգտագործումը որպես օրինական իշխանության տապալման միջոց եւ դրա նախադեպի ստեղծումը:

Նախադեպի պարագան, ինչ խոսք, մտահոգիչ է Իրաքի անմիջական հարեւաններից Սիրիայի եւ Իրանի համար: Հատկապես այն դեպքում, երբ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը, պետքարտուղարը եւ բարձրաստիճան այլ պաշտոնյաներ ամենօրյա ասպարիզ հայտարարություններով անընդհատ սպառնալիքի տակ են պահում այս երկրներին: Թեեւ Թուրքիան իշխանության տապալման նախադեպի խնդիր չունի, ոչ էլ ԱՄՆ-ի բարձրագույն ղեկավարությունն է նրան սպառնում, սակայն նրան էլ խիստ անհանգստացնում են հյուսիսային Իրաքի քաղաքական զարգացումները:

Դրանց ընթացքը ենթադրում է քրդական ինքնիշխանության ստեղծումը: Ուստի ստեղծման հավանականությունը Թուրքիայի համար եւ նախադեպ, եւ սպառնալիք է դառնում: Քանի որ քրդերը բացի Թուրքիայից, բնակվում են նաեւ Սիրիայում եւ Իրանում, հետեւաբար վերջիններիս ԱՄՆ-ի հետ սպառնում է նաեւ ամերիկյան նախաձեռնությամբ Իրաքի հյուսիսում ստեղծվող քրդական ինքնիշխանությունը:

Որքան էլ վերոհիշյալ պետությունները հակաիրաքյան պատերազմին հակադրվելու տարբեր պատճառներ ունենան, դրա երկարաձգումը նախընտրելի էր բոլորին, առավել եւս Իրաքի անմիջական հարեւաններին: Այն առումով, որ իրաքցիների հետ երկարատեւ թեժ մարտերն անխուսափելիորեն ԱՄՆ-ից կխլեին մարդկային ռեսուրսների նորանոր կորուստներ: Իսկ Բուշի վարչակազմն ամերիկյան հասարակական կարծիքի առջեւ արդարանալու պարտավորության տակ այլեւս ի վիճակի չէր լինի ռազմական սպառնալիքի ենթարկել Սիրիային եւ Իրանին: Այդ ընթացքում թուրքերը կսանձային հյուսիսային Իրաք ներխուժելու իրենց մտադրությունը Սադդամի դեմ երկրորդ ճակատի բացման անհրաժեշտությամբ պատճառաբանելու բավականին լուրջ հիմքեր:

Բաղդադի առանց դիմադրության անկումով եթե Սիրիան եւ Իրանը կորցրել են ԱՄՆ-ի սպառնալիքներից խուսափելու հնարավորությունը, ապա Թուրքիան զրկվում է հյուսիսային Իրաք ներխուժելու եւ ռազմական միջամտությամբ՝ եթե ոչ քրդական ինքնիշխանության ձեւավորմանը խոչընդոտելու, ապա գոնե քրդերի առաջխաղացումը դեպի Քիրքուք եւ Մոսուլ կասեցնելու հնարավորությունից:

Ուրեմն թուրքերի համար խնդիրը սոսկ քրդական ինքնիշխանությունը չէ, այլ քրդերի իշխանության տարածումը Մոսուլի եւ Քիրքուքի պես Իրաքի նավթային կենտրոնների վրա: Տարածման լավագույն ձեւը թերեւս նշված քաղաքների գրավումն էր: Բաղդադի անկումից հետո քուրդ փեշմերգաները, ամերիկյան հատուկ զորախմբի օժանդակությամբ, նախ գրավեցին Քիրքուքը, ապա մտան Մոսուլ:

Քրդերի ռազմական հաջողությունները Թուրքիայի կառավարող շրջանակներում իրարանցում են առաջ բերել: Թերեւս այդ առումով պատահական չէ փոխվարչապետ եւ արտգործնախարար Աբդուլլահ Գյուլի հեռախոսազրույցն ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելի հետ: Թուրքական թերթերն ապրիլի 11-ի համարներում նշում են, որ Գյուլը, պահանջելով քուրդ փեշմերգաներին անհապաղ դուրս բերել Քիրքուքից, Փաուելին հիշեցրել է այն երաշխիքները, որը Թուրքիային տվել էր ԱՄՆ-ը: Փաուելն իր հերթին հավաստել է, որ փեշմերգաները դուրս կբերվեն:

Նրա հավաստիացումը մամուլի ասուլիսում հաստատել է Սպիտակ տան խոսնակ Արի Ֆլեշերը, մասնավորապես ասելով. «Քիրքուքի վերահսկողությունն իրականացնելու են ամերիկյան զորքերը»: Նույն օրը Գյուլը Քիրքուքից փեշմերգաների դուրսբերման երաշխիք էր ստացել նաեւ Իրաքյան Քրդստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Մասուդ Բարզանիից: Մինչդեռ այդ նույն Բարզանին հակաիրաքյան պատերազմի նախօրյակին նախազգուշացնում էր Թուրքիային զորք չուղարկել Քիրքուք, այլապես սպառնալով թուրք զինվորի համար գերեզման դարձնել քաղաքի փողոցները:

Ինչո՞վ բացատրել Բարզանիի այս շրջադարձը: Ըստ երեւույթին ԱՄՆ-ի հետ փոխհամաձայնեցված գործողություններով, որոնց հիմքում համատեղ մշակված ռազմավարությունն է: Հարկ է նշել, որ հյուսիսային Իրաքում ամերիկացիները, բացի Բարզանիից, հենվում են նաեւ Իրաքյան Քրդստանի հայրենասերների միության նախագահ Ջելալ Թալաբանիի եւ PKK-ի իրավաժառանգորդ KADEK-ին ենթակա զորամիավորումների վրա:

Թվում է, թե հյուսիսային Իրաքում քրդական ինքնիշխանության առումով ԱՄՆ-ի համագործակցությունը քուրդ առաջնորդների հետ անհամեմատ կարեւոր է, քան Թուրքիային տված երաշխիքները՝ Փաուելի եւ Ֆլեշերի հավաստիացումներով հանդերձ: Թերեւս այդ համագործակցության շնորհիվ է, որ քուրդ առաջնորդները կարողանում են անտեսել Քիրքուքում ամրանալու դեպքում քրդերին այնտեղից թուրքական զորքով դուրս բերելու Թուրքիայի սպառնալիքները: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա Թուրքիային տված նրա երաշխիքները չեն խանգարում, որ քրդերը Քիրքուքից հետո գրավեն նաեւ Մոսուլը: Սա ցույց է տալիս, որ հյուսիսային Իրաքում ԱՄՆ-ն առաջնորդվում է ոչ թե թուրքերին տված երաշխիքներով, այլ նախապես մշակված քաղաքական ծրագրերով, որոնց մեջ որոշակի տեղ են գրավում քրդերը:

ՀԱՅՈՑ ՇԱՔԲԱՏ

ՄԵՐԺՎԱԾՆԵՐԸ

«Երազանքի նախագիծը»

1927-ին էրեական թեմայի մեջ մասնագիտացած լրագրող Հերբերթ Էսբերին հրատարակեց «Նյու Յորքի հրոսակախմբերը» փաստագրական գիրքը 1846-ից մինչեւ 1863-ն ընդգրկող այն ժամանակահատվածի մասին, որն Ամերիկայի պատմության մեջ հայտնի է որպես «Թամանի հոլի դարաշրջան»՝ այդ տարիների քաղաքական ասպարեզում իշխող երկու կուսակցություններից մեկի անվամբ: Ըստ Էսբերիի, հենց «հրոսակախմբերն էին քաղաքական կուսակցությունների նախատիպը, եւ ամերիկյան ազգային բնավորությունը ձեւավորվել է փողոցներում ու կոփվել հանցագործ խմբավորումների արյունալի բախումների մեջ»:

Կես դար անց ռեժիսոր Մարտին Սկորսեզեն, որն իրեն դրսեւորել է իբրեւ «էրեական աշխարհի ներկայացուցիչների հոգեբանության եւ նրանց պրած դրամա-

Ջուլիան Մուր

ների մասնագետ», կարդալով Էսբերիի գիրքը, տարվեց «Նյու Յորքի հրոսակախմբերի» հիման վրա ֆիլմ նկարահանելու գաղափարով: Այդ ժամանակից ի վեր դա Սկորսեզեի «երազանքի նախագիծն» էր, որը շուրջ 25 տարի նա պարարտյուն ջանում էր կյանքի կոչել: Վերջապես, «Միրամաքս» կինոընկերության ղեկավար Հարվի Ուայնսթայնի օրհնությունն ու միլիոնները ստանալով, Սկորսեզեն 2000-ի սեպտեմբերին Իտալիայում ձեռնամուխ եղավ ֆիլմին: Սոս ութ ամիս ձգված նկարահանումների ընթացքում 85 միլիոն դոլար սկզբնական բյուջեն հասավ 100 միլիոնի: Ուայնսթայնի հետ ծագած տարաձայնությունների պատճառով Սկորսեզեն ստիպված էր մոտ չորս ժամ տեւող նախնական տարբերակը կրճատել մոտ մեկ ժամով: Ֆիլմի պրեմիերան, քանիցս հետաձգվելով, ի վերջո, կայացավ 2002-ի դեկտեմբերին, եւ ի հաստուգումն բազմաչարչար ողիսականի, «Նյու Յորքի հրոսակախմբերը» ներկայացվեց 10 «Օսկարի»: Մինչդեռ Ամերիկայի արյունահեղ քաղաքական պատմությունը բնավ կինոակադեմիայի սրտով չէր, այնպես որ Սկորսեզեի ֆիլմին նույնիսկ մի հատիկ երկրորդական «Օսկար» բաժին չընկավ: Ասենք, Սկորսեզեն արդեն ընտելացել է անտեսվածի վիճակին: «Կատաղի Ցուլը», «Քրիստոսի վերջին փորձությունը», «Լավ տղերքը» ֆիլմերից հետո նա չորրորդ անգամ էր որպես լավագույն ռեժիսոր առաջադրվել կինոակադեմիայի մրցանակին: Բայց «Օսկար» ստանալու կիսակույր արձանիկը ամերիկյան էկրանի կենդանի դասականներից մեկին դեռ չի կի անվամբ: Ըստ Էսբերիի, հենց «հրոսակախմբերն էին քաղաքական կուսակցությունների նախատիպը, եւ ամերիկյան ազգային բնավորությունը ձեւավորվել է փողոցներում ու կոփվել հանցագործ խմբավորումների արյունալի բախումների մեջ»:

Կես դար անց ռեժիսոր Մարտին Սկորսեզեն, որն իրեն դրսեւորել է իբրեւ «էրեական աշխարհի ներկայացուցիչների հոգեբանության եւ նրանց պրած դրամա-

Փիթեր Օ'Թուլն իր երկարամյա ստեղծագործական կյանքի ընթացքում յոթ անգամ ներկայացվել է Ամերիկյան կինոակադեմիայի մրցանակին, եւ ինչպես Մերիլ Սթրիփն ասաց նրան ներկայացնելիս, լավագույններից շատերի նման յոթ անգամ էլ ձեռնունայն է մնացել: Օ'Թուլի բախտը այս տարի, վերջապես, բերեց, իսկ ու՞մ էր, որ «Օսկարը» մերժեց:

վով, բերեր նույնիսկ 85 միլիոն դոլար:

Չախողված ռեկորդ

«Շմիդտի մասին» կինոնկարի գլխավոր դերակատար Ջեք Նիքոլսոնը այս տարի 12-րդ անգամ էր ներկայացվել «Օսկարի»՝ հավասարվելով նույն ցուցանիշն ունեցող Քեթրին Հեփբըրնին: Հինգ տարի առաջ էր, որ Մեծ Ջեքն արժանացավ իր երրորդ «Օսկարին» «Ավելի լավ չի լինում» ֆիլմի համար: Եթե Նիքոլսոնին շնորհվեր չորրորդ արձանիկը, նա կկրկներ այն ռեկորդը, որ պատկանում է նույն Քեթրին Հեփբըրնին, վերջինս կինոյի պատմության մեջ միակն է դերասանական հա-

Ջեք Նիքոլսոն

մայնից, որ «Օսկարի» քառակի մրցանակակիր է: Բայց Հեփբըրնին հավասարվելու փորձը ձախողվեց: Համենայն դեպս, առայժմ:

Մի՞թե

Թեեւ «էկրանացում» ֆիլմի դերերից մեկում նկարահանված կրկնակի օսկարակիր Մերիլ Սթրիփը այս անգամ արձանիկ չստացավ, նրան հաջողվեց նոր ռեկորդ սահմանել: Անդադրում Մերիլը 13-րդ անգամ էր առաջադրվել կինոակադեմիայի մրցանակին՝ գերազանցելով Քեթրին Հեփբըրնին եւ Ջեք Նիքոլսոնին: Այնուամենայնիվ, վերջերս Փարիզում 53-ամյա Սթրիփը, իրեն շնորհված Արվեստների շքանշանն ընդունելով, հայտարարեց. «Շնորհակալություն Ֆրանսիային՝ իմ տարիքի կանանց հանդեպ թե կյանքում, թե կինոյում ցուցաբերած սիրո համար: Ամերիկայում ոչ մեզ, ոչ էլ մեր ստեղծագործական կարեւորությունը, սովորաբար, չեն գնահատում»:

Մի՞թե: Ով-ով, բայց Սթրիփը տրնջալու տեղ չունի:

Թյուրիմացություն

Սալմա Հայեկը պատմել է, թե ի վնաս իր աստեղային տեսքի՝ ինչ զոհողություններ է դիմել «Ֆրիդա» ֆիլմում մեքսիկացի նշանավոր նկարչուհուն արտաքուստ նմանվելու համար: Նա ոչ միայն հաստ հոնքեր է փակցրել, այլեւ սափրել վերին շրթունքը, որպեսզի բեղիկներ աճեն: Այնինչ կինոակադեմիան, այդ անձնուրաց ջանքերը վերագրելով գրիմարարներին, «Ֆրիդայի» համար «Օսկարը» պարգեւեց նրանց: Հուսախաբ Սալման արդեն ափսոսում է սափրվելու համար. Ֆրիդայի դերը նա արդեն խաղացել է, բայց բեղիկները շարունակում են աճել: «Երեւում է՝ սա երկար կյանք, եթե ոչ ընդմիշտ», հառաչում է Սալման, որ հիմա մոմի օգնությամբ ստիպված է պայքարել աներեւ բեղիկների դեմ:



Մարտին Սկորսեզե

Միակը

Ջուլիան Մուրը եւս կինոակադեմիայի ոսկեզօծ արձանիկից զրկվեց, բայց «Օսկարի» պատմության մեջ նա մինչեւ օրս միակն է, որ նույն տարում միանգամից երկու մրցանակի էր հավակնում «Դրախտից հեռու» եւ «Ժամեր» ֆիլմերի իր դերակատարումների համար:

Ո՞վ է լավագույնը

Հոլիվուդի վետերաններից մեկը՝ 77-ամյա Փոլ Նյումանը, թեեւ երկու «Օսկար» ունի եւ այս տարի «Անիծյալ ուղի» ֆիլմի համար հավակնում էր երրորդին, սովորաբար խուսափում է «Օսկարների» հանձնման արարողությանը մասնակցելուց: Երբ նրան հարցնում են չներկայանալու պատճառի մասին, մի լրագրողի խոսքերով, «այնպես է դեմքը ծամածռում, ասես ջրով չբացված կիտրոնի հյութ է կուլ տվել», իսկ հետո ստիպված է բացատրել. «Չեմ հասկանում՝ ինչ շահ կա դերասանների միջեւ մրցություն անցկացնելուց: Երբ մի դերասան հիանալի կերպար ունի, ընտիր սցենար եւ լավ ռեժիսոր, նրան մնում է միայն գործը չփչացնել: Իսկ մյուսին բաժին են ընկել աղաբնորհ ռեժիսոր ու անպետք սցենար, եւ նա տիտանական ջանքերի գնով այդ ամենը հաղթահարել է ու ցնցող հաջողության հասել: Դե, արի ու ընտրիր, թե նրանցից ով է լավագույնը»:

Արժե դիտել

14 ապրիլի, 22.20 ՀՌ

■ **«Հին հրացանը»★**: Ռեժիսոր՝ Որբեր Էնրիկո: Դերերում. Ֆիլիպ Նուարե, Ռոմի Շնայդեր: Ֆրանսիա-Գերմանիա, 1975:

Վիրաբույժ Դանդյեն՝ հեզաբարո մի մարդ, կնոջ եւ դստեր հրեավոր սպանությունից հետո վերածվում է խելահեղ վրիժառուի՝ ֆաշիստների մարդասպան սկսելով:

15 ապրիլի 24.00 Պոմեքեւս

20 ապրիլի, 23.55 Երեւան

■ **«Դրախտ»★**: Ռեժիսոր՝ Թոմ Թիվվեր: Դերերում. Քեյթ Բլանշեթ, Ջովաննի Ռիբիզի: Գերմանիա - Մեծ Բրիտանիա, 2001:

Նորելուկ ոստիկանը, սիրահարվելով ակամա մարդասպան դարձած աղջկան, նրա հետ դիմում է փախուստի:

15 ապրիլի, 00.20 ՀՌ

■ **«Երջանկություն»★★**: Ռեժիսոր՝ Թեդ Սոլոնց: Դերերում. Վեյն Ադամ, Ջոն Լովից, Ֆիլիպ Սեյմուր Հոֆման, Լարա Ֆլին Բոյլ: ԱՄՆ, 1998:

Ամերիկյան գավառի բնակիչների կյանքը ներկայացված է որպես սոցիալական երգիծանքով համեմված «սեւ» կատակերգություն:

17 ապրիլի, 23.45 Երեւան

■ **«Շմիդտի մասին»★**: Ռեժիսոր՝ Ալեքսանդր Փեյն: Դերերում. Ջեք Նիքոլսոն, Քեթի Բեյթս, Դերմոթ Մալրունի: ԱՄՆ, 2002:

Թոշակառու Շմիդտը մեծ ուշացումով փորձում է վերաիմաստավորել իր կյանքը:

17 ապրիլի, 00.40 Россия

■ **«Որդու սենյակը»★**: Ռեժիսոր՝ Դերերում. Նաննի Մորետտի: Դերերում. Ն. Մորետտի, Լաուրա Մորանտե, Ջասմին Տրինկա, Ջուզեպպե Սանֆելիչե: Իտալիա-Ֆրանսիա, 2001:

Որդու ողբերգական մահը խաթարում է երջանիկ ընտանիքի կյանքը: Ֆիլմին շնորհվել է Կաննի փառատոնի գլխավոր մրցանակը:

19 ապրիլի, 01.55 1-ый канал

■ **«Գոսֆորդ Պարկ»★★**: Ռեժիսոր՝ Որբերտ Օլթման: Դերերում. Մայքլ Գեմբոն, Քրիստին Սքոթ Թոմաս, Մեգի Սմիթ, Ռայան Ֆիլիպ, Էմիլի Ուոթսոն: Իտալիա-Մեծ Բրիտանիա -ԱՄՆ-Գերմանիա, 2001:

Քրեական կատակերգություն անցյալ դարի 30-ականների անգլիական վերնախավի կյանքից:

20 ապրիլի, 22.40 ՀՌ

■ **«Համլետ»★**: Ռեժիսոր՝ Լորենս Օլիվյե: Դերերում. Լ. Օլիվյե, Էյլին Հեյլի, Բեզիլ Սիդնի, Ջին Սիմոնս: Մեծ Բրիտանիա, 1948:

Շեքսպիրյան ողբերգության այս էկրանացումը արժանացել է 4 «Օսկարի», այդ թվում՝ որպես լավագույն կինոնկար:

ՉԱԽՈՂԱԿՆԵՐԻ ՏԱՍՆՅԱԿԸ

«Օսկարի» ձեռնունայն հավակնորդները

11 անվանակարգ

✱«Շրջադարձային կետ» (1977), ռեժ.՝ Հերբերտ Ռոս

«Բաց մանուշակագույն» (1985), ռեժ.՝ Սթիվն Սփիլբերգ

10 անվանակարգ

✱«Նյու Յորքի հրոսակախմբերը» (2002), ռեժ.՝ Մարտին Սկորսեզե

9 անվանակարգ

✱«Աղվեսիկներ» (1941), ռեժ.՝ Ուիլյամ Ուայլեր

8 անվանակարգ

✱«Փեյթոն Փլեյս» (1957), ռեժ.՝ Մարկ Ռոբսոն

✱«Միանձնուհու պատմությունը» (1959), ռեժ.՝ Ֆրեդ Ցինեման

«Ռեգթայմ» (1981), ռեժ.՝ Միլոշ Ֆորման

✱«Օրվա վերջալույսին» (1993), ռեժ.՝ Ջեյմս Այվորի

7 անվանակարգ

✱«Բարակ կարմիր գիծը» (1998), ռեժ.՝ Թերենս Մալիք

«Յուրայինը» (1999), ռեժ.՝ Մայքլ Ման:

ՈՎ ԷՐ «ՕՍԿԱՐԻ» ԱՐԺԱՆԻ

Ամերիկյան կինոակադեմիայի ավանդական ծիսակատարության նախաշեմին ամերիկացի ֆիլմադատները, նույնքան ավանդաբար, սեփական մրցանակները շնորհեցին ամենաարժանավորներին: «Օսկարների» ընծայումից հետո երեւան եկավ, որ կինոգետների կարծիքը մեծ մասամբ աղեսալիորեն չի համապատասխանում ակադեմիկոսների վճիռներին:

«Չիկագո» մյուզիքլը լավագույն ֆիլմ են ճանաչել միայն Հեռարձակող ընկերությունների կինոֆիլմադատների ասոցիացիան եւ Դալասի նրանց գործընկերները: Ըստ Կինոֆիլմադատների ազգային ընկերության եւ Բոստոնի ու Սան Ֆրանցիսկոյի կինոֆիլմադատների, լավագույնը Ռոման Պոլանսկու «Դաշնակահարն» է, իսկ Նյու Յորքում, Չիկագոյում եւ Սիեթլում նախապատվությունը տրվել է Թոդ Հեյնսի «Դրախտից հեռու» ֆիլմին, որը, առհասարակ, «լավագույն կինոնկար» անվանակարգում «Օսկարի» հավակնորդների հնգյակը չէր մտել: Մինչդեռ Նյու Յորքի, Չիկագոյի, Սան Ֆրանցիսկոյի, Սիեթլի կինոգետների համոզմամբ, Թոդ Հեյնսն արժանի է նաեւ լավագույն ռեժիսոր համարվելու: Լաս Վեգասի եւ Դալասի նրանց եղբայրակիցների, ինչպես նաեւ Ինտերնետի կինոֆիլմադատների ընկերության կարծիքով էլ, «Մասանիների տիրակալի» երկրորդ մասը ներկայացրած Փիթեր Ջեքսոնն է արժանի այդ տիտղոսին: Իսկ Ռոման Պոլանսկուն՝ որպես լավագույն ռեժիսորի, «Օսկար» շնորհելու ակադեմիայի վճռին համամիտ են տոկ կինոֆիլմադատների ազգային ընկերությունն ու բոստոնցիները: Ինչ վերաբերում է «Դաշնակահարի» դերակատար Ադրիեն Բրոդիին լավագույն դերասան ճանաչելուն, ակադեմիայի հետ կարող են համաձայնել դարձյալ միայն բոստոնցիները: Կինոֆիլմադատների գերակշիռ մասն այդ կոչումը շնորհել են «Նյու Յորքի հրոսակախմբերի» գլխավոր դերերից մեկում նկարահանված Դանիել Դեյ-Լուիսին: Էլ ավելի կուռ համերաշխությամբ կինոֆիլմադատները լավագույն դերասանուհի են ճանաչել Ջուլիան Մուրին՝ «Դրախտից հեռու» ֆիլմի գլխավոր դերակատարման համար: «Օսկար» ստացած Նիկոլ Քիդմանին զորավիգ են միմիայն Լաս Վեգասի կինոֆիլմադատները, ինչպես նույն բախտին արժանացած Քեթրին Զիտա-Ջոնսին՝ Հեռարձակող ընկերությունների կինոֆիլմադատների ասոցիացիան: Քեթի Բեյթսը՝ Ջեք Նիքոլսոնի խաղընկերուհին «Շմիդտի մասին» ֆիլմում, ավելի մեծ հավանության է արժանացել, քան Զիտա-Ջոնսը: Կինոգետների մեծամասնությունն ու ակադեմիան փաստորեն համակարծիք են լոկ Քրիս Քուփերի վերաբերյալ, որն «Օսկարի» արժանացավ տղամարդու երկրորդական դերի համար («էկրանացում»): Դրա փոխարեն՝ ֆիլմադատները կտրականապես դեմ են «Ինչ-որ տեղ Աֆրիկայում» ժապավենին՝ իբրեւ լավագույն արտասահմանյան կինոնկարի, բաժին ընկած «Օսկարին»: Նրանք գրեթե միահամուռ իրենց ձայնը տվել են մեքսիկացի Ալֆոնսո Կուարոնի «Եվ քո մորն էլ» ֆիլմին, որը, ընդհանրապես, «Օսկարի» առաջադրվելու պատվին չէր արժանացել:

Այսպիսով, կինոֆիլմադատներից շատերի գնահատմամբ, գլխավոր «Օսկարները», ընդամենը մի բացառությամբ, ամենեւին էլ չեն շնորհվել նրանց, ովքեր իսկապես վաստակել էին դրա իրավունքը:

Էջը պատրաստեց
ՀԱՎԵՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ

Կասպարովի դիրքն անսասան է

ՖԻԴԵ-ն հրապարակել է ապրիլի 1-ի դրությամբ շախմատիստների վարկանիշային հերթական աղյուսակը: Այն նախկինի պես գլխավորում է աշխարհի 13-րդ չեմպիոն Գարրի Կասպարովը, որն ապրիլի 13-ին կնշի իր 40-ամյակը: Հունվարի 1-ի համեմատ Կասպարովի վարկանիշը նվազել է 17 կետով եւ այժմ 2830 է: Նա ներկայում աշխարհի միակ շախմատիստն է, որի վարկանիշը 2800-ից բարձր է: Հունվարին

հրապարակված վարկանիշային աղյուսակում 2-րդ տեղը գրաված Վլադիմիր Կրամնիկը եւս ուներ 2800-ից բարձր վարկանիշ (2807): Սակայն այժմ նրա վարկանիշը նվազել է (2789): Իսկ ահա 3-րդ հորիզոնականը զբաղեցնող Վիշվանաթան Անանդը շնորհիվ Վեյք Ան Զեեում, Լինարեսում, Մոնակոյում անցկացրած հաջող մրցելույթների 11 կետով ավելացրել է վարկանիշը (2764): Ուշագրավ է տղամարդկանց մրցաշարերի անփոփոխ մասնակից հունգարուհի գրոսմայստեր Հուդիթ Պոլգարի առաջընթացը: Նա ընդգրկվել է լավագույն տասնյակում՝ ընտրյալների շարից դուրս մղելով ռուսաստանցի Ալեքսանդր Գրիշչուկին: Լավագույն տասնյակը եզրափակող Պոլգարը վարկանիշն ավելացրել է 15 կետով՝ հասցնելով 2715-ի: Հունվար ամսվա համեմատ սա լավագույն տասնյակում կատարված միակ փոփոխությունն է: Ճիշտ է, տասնյակի ներսում էլ կան տեղաշարժեր: Այսպես, Լեկոն 10 կետով բարելավելով ցուցանիշը, մեկ հորիզոնականով բարձրացրել է (4-րդ տեղ): Շիրովը 9-րդ տեղից տեղափոխվել է 5-րդ հորիզոնական եւ այլն: Լավագույն տասնյակի ցուցանիշներն այսպիսին են.

1. Գարրի Կասպարով	2830
2. Վլադիմիր Կրամնիկ	2789
3. Վիշվանաթան Անանդ	2764
4. Պետեր Լեկո	2746
5. Ալեքսեյ Շիրով	2735
6. Վեսելին Թոփալով	2735
7. Եվգենի Բարեեւ	2734
8. Մայքլ Ադամս	2723
9. Ռուսլան Պոնոմարյով	2718
10. Հուդիթ Պոլգար	2715

100 ուժեղագույն շախմատիստների թվում ընդգրկված են Հայաստանի չորս ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Սլովակիայում բնակվող Սերգեյ Մովսիսյանը: Ամենաբարձր վարկանիշն ունի Վլադիմիր Հակոբյանը (2703): Նա պահպանել է իր վարկանիշը, սակայն հունվարի համեմատ 2 հորիզոնականով նահանջել է՝ զբաղեցնելով 13-րդ տեղը: Սերգեյ Մովսիսյանը վարկանիշը նվազեցրել է 4 կետով (2659) եւ 34-րդ տեղից մեկ աստիճանով նահանջել է: Ռաֆայել Վահանյանը 31-րդ տեղից նահանջել է 38-րդ հորիզոնական՝ վարկանիշը նվազեցնելով 14 կետով (2653): Սմբատ Լպուտյանի վարկանիշը (2638) թեեւ մնացել է նույնը, սակայն նա էլ 48-րդ տեղից տեղափոխվել է 54-րդ հորիզոնական: Նահանջել է նաեւ Լեւոն Արոնյանը (85-ից 91-րդ տեղը՝ վարկանիշը նվազեցնելով 4-ով (2606):

Շուտակը կգլխավորի Վրաստանի հավաքականը

Խորվաթ մասնագետ Իվո Շուտակը, որն արդեն մեկ տարի մարզում է Թբիլիսիի «Դինամո», կգլխավորի Վրաստանի ազգային հավաքականն ապրիլի 30-ին Ռուսաստանի եւ հունիսի 7-ին Իռլանդիայի ընտրանիների հետ կայանալիք հանդիպումներում: Բացառված չէ, որ եթե այդ խաղերը հաջող ընթանան, ապա նրան կառաջարկվի պայմանագիր կնքել: Առայժմ 56-ամյա մարզիչը կբարունակի աշխատանքը Թբիլիսիի «Դինամոյում»: Շուտակն արտասահմանցի 2-րդ մարզիչը կլինի, ով գլխավորելու է հավաքականը: 1998 թ. մայիսից հոկտեմբեր ժամանակահատվածում հավաքականը գլխավորել էր հոլանդացի Յոհան Բոսկամպը, սակայն ձախողվեց: Հարկ է նշել, որ մինչ Շուտակը, ֆեդերացիան առաջարկ էր արել գերմանացի մասնագետ Ֆոլկեր Ֆինկեին: Վերջինս նշել էր, որ իր համար ներկայումս առաջնահերթը «Ֆրայբուրգին» բունդեսլիգա վերադարձնելն է: Բացի այդ, ըստ Ֆինկեի, ֆեդերացիան հստակ չի ձեւակերպել, թե հավաքականի առջեւ ինչ խնդիր է դրվելու:

Իսրայելի հավաքականը կխաղա Թբիլիսիում

Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիան համաձայնել է, որ Իսրայելի հավաքականը սեփական հարկի տակ հունիսի 7-ին Սլովենիայի եւ սեպտեմբերի 10-ին Մալթայի հավաքականների հետ կայանալիք ընտրական մրցախաղերն անցկացնի Թբիլիսիում: Ինչպես հայտնի է, ՖԻՖԱ-ն եւ ՈՒԵՖԱ-ն արդեն 2 տարի արգելել են Իսրայելում ֆուտբոլի պաշտոնական խաղերի անցկացումը, որի հետեւանքով հավաքականն ու ակումբները ստիպված են այլ երկրներում խաղադաշտ փնտրել: Ֆրանսիայի հավաքականի հետ ընտրական վերջին հանդիպումն իսրայելցիներն անցկացրել էին իտալական Պալերմո քաղաքում: Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիան հավաստիացրել է, որ խաղերի անցկացման համար կատարյալ անհրաժեշտ բոլոր պայմանները:

Ժամկետը հայտնի է

ՖԻՖԱ-ի որոշմամբ ֆուտբոլի աշխարհի երիտասարդական առաջնությունը, որ հետաձգվել էր իրաքյան պատերազմի հետեւանքով, կկայանա նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 13-ը Միացյալ Արաբական Էմիրություններում: Առաջնության պարգեւները կվիճարկեն 24 ուժեղագույն հավաքականները: Աշխարհի ներկայիս չեմպիոնն Արգենտինայի հավաքականն է, որը հաջողության հասավ սեփական դաշտում:

ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԹԱՇՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ

Կարպովը հաստատեց իր բարձր կարգը

Վարշավայում ավարտվեց արագ շախմատի մրցախաղն աշխարհի 12-րդ չեմպիոն Անատոլի Կարպովի եւ Եվրոպայի ներկայիս չեմպիոն Բարտոլոմեյ Մաչեյայի միջեւ: 8 պարտիայից բաղկացած մրցաշարում Կարպովն անվիճելի առավելության հասավ (6-2): Նա շահեց սեւ խաղաքարերով անցկացրած բոլոր չորս պարտիաները, իսկ սպիտակներով ոչ-ոքի ավարտեց հանդիպումները: 52-ամյա Կարպովը մեկ անգամ եւս ապացուցեց, որ արագ շախմատի գծով համարվում է աշխարհի ուժեղագույն շախմատիստներից մեկը:

Մասնակիցների թվում է նաեւ Սերգեյ Մովսիսյանը

Բուդապեշտում մեկնարկում է ՖԻԴԵ-ի 17-րդ կարգի մրցաշար, որի 10 մասնակիցների թվում է նաեւ մեր հայրենակից Սերգեյ Մովսիսյանը: Գլխավոր մրցանակի համար մրցավեճի կբռնվեն հունգարացի գրոսմայստերներ Պետեր Լեկոն, Հուդիթ Պոլգարը, Զոլտան Ալմաշին, Պետեր Աչը, Ֆերենց Բերտ

ARG
ՀԱՅՈՒՍԳԱԶԱՐԴ

Բնական գազի հարգելի բաժանորդներ

Օգտվեք միայն գործարանային արտադրության գազասարքերից, ոչ հնացած ու մաշված ծխաօդատար ուղիներից: Գազի սարքավորումների օգտագործման կանոնները չպահպանելը կարող է վթարների եւ դժբախտ դեպքերի պատճառ հանդիսանալ:

Վստահեք եւ համագործակցեք ներտնային գազի համակարգը սպասարկող ընկերությունների հետ:

Դա ձեր անվտանգության ապահովման երաշխիքն է:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քորթիլ կորպորացիայի Հայաստանի մասնաճյուղն աշխատանքի է հրավիրում մեխանիկների հետեւյալ որակավորմամբ.

Շինարարական տեխնիկայի մասնագետ, որը կկատարի շինարարական տեխնիկայի վիճակի ստուգման, ինչպես նաեւ վերանորոգման աշխատանքներ:

Թեկնածուները կարող են զանգահարել Քորթիլ կորպորացիայի Հայաստանի մասնաճյուղի գրասենյակ՝ 59-33-88 հեռախոսահամարով:

ՀՍՄ 1965 թ. գործող **Հայաստանի ռասմողական ջոկատների հանրապետական շտաբը,** որը հանդիսանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամավորական ծառայության կոմիտեի անդամ, հրավիրում է որպես կամավորականների մասնակցելու Եվրոպայի երկրներում, ԱՄՆ-ում, Հայաստանում միջազգային աշխատանքի ճամբարների ամառային ծրագրերին:

Պայմանները՝ անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն) լեզվի տիրապետում, կամավորականի անդամավճարի եւ ուղեվարձի վճարման հնարավորություն:

Դիմումներն ընդունվում են հետեւյալ հասցեով՝ **Կորյունի 19ա, 7-րդ հարկ:**

Հեռ.՝ 522788, 522701

For Your Internal News of Armenia Log on to

www.azg.am

In English, Russian, Armenian and Turkish

529353 ԱՆՎՃԱՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Վաճառվում է** 3 սենյականոց բն. Վարդանանց 28, բն. 34, 9/3 հասցեում, բ/ս 81,2 ք.մ, կաղիսալ վերանորոգված, ունի սառը եւ տաք ջրի բաք, լողասենյակի հատակը ջեռուցվող, պատուհանները ձայնամեկուսիչ եվրոպական, օդորակիչ, արբանյակային ալեհավաք, 6 պահարան, մուտքի մոտ 2 մեծ երկաթյա պահարան եւ ավտոնայակ: Գինը՝ 45.000 դոլար: Հեռ.՝ 55-14-82, առանց միջնորդի:
- Վաճառվում է NOKIA 8210 մոդելի բջջային հեռախոս: Գինը՝ 120 դոլար: Հեռ.՝ (09) 423833:
- Ցանկանում եմ ունենալ հովանավոր՝ գիրք հրատարակելու համար, որ նվիրված է կանանց եւ ունի պատմագեղարվեստական բնույթ: Հեռ.՝ 57-20-58, Արա:
- Տրվում է վարձով 1 սենյ. բն. Սերգեյյան ինստ. մոտ, հեռ.՝ 27-84-43:
- «Աշխատանքի հրավեր» Ռուսական միջազգային կազմակերպությունը աշխատանքի է հրավիրում 18-ից բարձր տարիքի անձանց: Հեռ.՝ 55-31-46 (տուն), 27-44-28 (աշխ. ժ. 11-13) (Աիդա):
- Շտապ պահանջվում են կահույքագործներ, զոդողներ, փականագործներ: Պայմաններին ծանոթանալու համար զանգահարել՝ 63-70-80, Արամ:
- Վաճառվում է 80 բաստանոց գերմանական ակորդեոն: Գինը՝ 40 դոլար: Հեռ.՝ 484324:
- Վաճառվում է 4 սենյ. բնակարան Ավանում, Դանիել Վարուժան թաղամասում, 9/6 հարկ: Գինը՝ 13.000 դոլար: Հեռ.՝ 624379, 533700:
- Վաճառվում են չեխական սալիկներ 15x15, 7 մետրը՝ 40 դոլար: Հեռ.՝ 484324:
- Նոր երաժշտության մուտքագրում SIMENS հեռախոսի զանգերի ցուցակում: Գինը՝ 1000 դրամ: Հեռ.՝ 399124:
- Վաճառվում է բնակելի տուն Հ. Քոչար փողոցում, 174 տուն: Ընդհանուր տարածը՝ 380 ք.մ, 1-ին հարկում գտնվում են նկուղներ, 2-րդ հարկում 1 ննջարան, 1 նախասրահ, 1 ճաշասենյակ, ունի մշտական ջուր, բնական գազ, որը դեռ չի միացված: Կա նաեւ ավտոնայակ եւ պարտեզ: Նախնական գինը՝ 48.000 ԱՄՆ դոլար: Հեռ.՝ 25-50-95, Մուրադ:
- Վաճառվում է 80 լիտրանոց Տերմեխ, նոր, հորիզոնական դիրքի համար: Գինը՝ 80 դոլար: Հեռ.՝ 24-82-70:
- Վաճառվում է SIMENS սառնարան, երկու դռնանի, 182x62 չափսի, օգտագործված: Նախնական գինը՝ 150 դոլար:
- Վաճառվում է NOVA լվացքի մեքենա, օգտագործված, լավ վիճակում: Նախնական գինը՝ 70 դոլար: Հեռ.՝ 24-82-70:
- Կգնեմ բջջային հեռախոս, հեռ.՝ 09-46-09-26, Հրանտ:
- Վաճառվում է Рубин հեռուստացույց 51 սմ տրամագծով, էկրանը TOSHIBA մակնիշի, տեխ. մասերը՝ արտասահմանյան: Գինը՝ 65 դոլար: Հեռ.՝ (09)423833
- Վաճառվում է մեքենայի հեղուկ գազի սարքավորում՝ իր բոլոր պարագաներով: Գինը՝ 80 դոլար: Հեռ.՝ 531439 (Արմեն):
- Վաճառվում է BMW մեքենայի ավտոպահեստամասեր, էժան, նաեւ նոր «Чайка» կարի մեքենա: Հեռ.՝ 533607:
- Վաճառվում է 1989 թ. արտադրության AUDI 80 կուրե սպորտային, գույնը՝ սպիտակ, շարժիչը՝ 6 մխոցային, ունի բարձրակարգ ստերեո համակարգ: Գինը՝ 3900 դոլար: Հեռ.՝ (09) 431079:
- Տրվում է վարձով 2 սենյ. բն. կենտրոնում (5/2) բոլոր հարմարություններով: Գինը՝ 200 դոլար: Հեռ.՝ 538341:
- Կգնեմ սեփական տուն մինչեւ 15.000 դոլարի սահմաններում, հոդամասի առկայությունը պարտադիր է: Հեռ. (09) 42 93 53:
- Վաճառվում է Ներքին Շենգավիթի 9 փողոցի 125 հասցեում 2 սենյականոց սեփական տուն: Ընդհանուր բնակ. տարածը՝ 60 ք.մ, նաեւ բակ՝ 20 ք.մ, մշտական ջուր, վերանորոգված է: Գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 48-45-63, Անդրանիկ կամ Կարինե:

Աղյուսակ N1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿԵՐԻՊ
առ 1.01.2003

Կազմակերպության անվանումը	«Մագնիսա» ՍՊԸ
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	Խաղատուն Կոլեկտիվ
Պետական գրանցում գրանցման համարը	29007002045
Հարկ վճարողի հաշվառման համարը	01822031
Շահի միավորը	հազ. դրամ
Գտնվելու վայրը	Ռաֆֆու 77
Փաստացի գործունեության իրականացման վայրը	Արմավիրի մարզ, գ. Փառաար Թախրով

Ակտիվ	Տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
II. Ընթացիկ ակտիվներ			
Առագաստ առարկաներ	110	159	159
Արտադրանք	140	9	7
Այլ դեբիտորական պարտքեր	180		1
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	6131	405
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	6299	572
Հաշվեկշիռ	230	6299	572

Պասիվ	Տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	240	5000	5000
Պահուստային կապիտալ	280	(6203)	(5873)
Ընդամենը սեփական կապիտալ	300	(1203)	(873)
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	6898	945
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420	42	
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	430	62	
Այլ կրեդիտորական պարտքեր	450	500	500
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	7502	1445
Հաշվեկշիռ	500	6299	572

Աղյուսակ N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ցուցանիշի անվանումը		Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)
Արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	15000 612	23615
Իրացված արտադրանքի, աշխատանքների ծառայությունների ինքնարժեք	020	(20671)	(23285)
Համախառն շահույթ (կորուստ)	030	(5671) 612	
Վարչական ծախսեր	050	(819) (253)	
Արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (կորուստ)	060	(6490) 359	330
Սովորական գործունեությունից շահույթ (կորուստ)	140	(6490) 359	330
Զուտ շահույթ (կորուստ) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	(6490) 359	330
Շահութահարկի գծով ծախս (եկամտահարկ)	170	- 72	
Զուտ շահույթ (կորուստ) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	(6490) 287	330

Աղյուսակ N3

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը / Դրսևորումները	տող	I. Նախորդ տարի (ժամանակաշրջան) Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ Կանոնադրական	Լրացուցիչ շահույթ (կորուստ)	Ընդամենը
Մնացորդն առ 31 դեկտեմբերի	010	5000	(6203)	(1203)
Մնացորդն առ 31.12.2002	100	5000	(6203)	(1203)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2003 թ.	010	5000	(6203)	(1203)
Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (կորուստ)	060		330	330
Մնացորդն առ 31.12.03	100	5000	(5873)	(873)

Աղյուսակ N4

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ ժամանակաշրջան գումար	դրամ	դրամարկղ	բանկ	Հաշվետու ժամանակաշրջան գումար	դրամ	դրամարկղ	բանկ
Դրամական միջոցների սարքերի մնացորդը	010	6508	6507		1	6131	6122		9
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր									
Արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	15735	15735						
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում՝	030	500	300		200	41822	22791		19031
	031				14114				
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	040	16235	16035		14314	41822	22791		19031
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր									
Նյութերի, պարագաների ձեռք բերման գծով	050	438	438			473	473		
Վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անունից	070	621	621			807	807		
Վճարումներ բյուջե	080	13872			13872	22301	3811		18490
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	090	434			434	545			545
Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	100	1247	1247			23422	23422		
	101	14114	14114			19031	19031		
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	110	30726	16420		14306	47548	28513		19035
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	120	(377)	13729		(14106)	(5726)	(5722)		(4)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	350	6131	6122		9	405,0	400,0		5,0

Աղյուսակ N5

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.3.2. Հաշվառողական հաշվեկշռի կից բացատրություններ

Հիմնական միջոցներ — Աղյուսակ 2

Դասի անվանումը	Տող	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ			
Մեքենաներ եւ սարքավորումներ			
- արժեք	041	1158	1158
- կուտակված մաշվածություն	042	1158	1158

Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին — Աղյուսակ 14

Հարկատեսակի անվանումը	Տող	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
Եկամտահարկ	020	(.16)	(12)
Ավելացված արժեքի հարկ	030	10,5	
Հաստատագրված վճարներ	080	5300	957,0
Տույժեր	090	1603,2	-
Ընդամենը	140	6897,7	945,0

Հաշվեկշռի հոդվածների մարման (փոխհատուցման) ժամկետների դասակարգմամբ — Աղյուսակ 16

	Տող	Կարճաժամկետ գումարներ	Երկարաժամկետ գումարներ
Ակտիվ			
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր (պարագաներ)	060	7	
Առագաստ առարկաներ	080	159	
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	110	406	
Դրամական միջոցներ	111	405	
Այլ դեբիտորներ	112	1	
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	120	572	
Ընդամենը ակտիվներ	130	572	
Պասիվ			
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	140	5000	5000
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝	150	(6203)	(5873)
Ընդամենը սեփական կապիտալ	160	(1203)	(873)
V. Ընթացիկ պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	200	7502	1445
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	210	7502	1445
Ընդամենը պասիվներ	220	6299	572

5.3.4. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ

Ֆինանսական արդյունքների հաշվետվություն ծախսերի՝ ըստ բնույթի դասակարգմամբ — Աղյուսակ 18

Ցուցանիշի անվանումը	Տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)
Արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների դիմաց հասույթ	010	15612	23615
Այլ կապիտալացված ծախսումներ	040	(20815)	22517
Անձնակազմի գծով ծախսումներ	060	1072	768
Զուտ շահույթ (կորուստ) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	130	(6275)	
Շահութահարկի գծով ծախս	140	72	330
Զուտ շահույթ (կորուստ) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	150	(6203)	330

Ղեկավար՝ ՍԱՔԻԿ ՄՆՏՈՒՅԱՆ

Գլխավոր հաշվապահ՝ ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 11. 4. 2003 Գինը՝ 100 դրամ